



ՄԻՖԵՐ
ԵՎ
ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
**Պարտադիր
կուտակային
կենսաթոշակային
համակարգի մասին**

ՀՅԴ Բյուրոյի տնտեսական
հետազոտությունների գրասենյակ



research@arf.am



010 52 18 90



ք.Երևան, 0010
Մ. Սկյուրյան 12/1

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ 5

ՄԻՖԵՐ ԵՎ ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՊԱՐՏԱԴԻՐ ԿՈՒՏԱԿԱՅԻՆ ԿԵՆՍԱԹՈՇՈՇԱԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

Հունիս 2018

ԵՐԵՎԱՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՍ 1. ԿԵՆՍԱԹՈՇՈՇՄԱՅԻՆ ԲԱՐԵՓՈՒՈՒՄՆԵՐԻ ՆԱԽՊԱՏԱՌԹՅՈՒՆ	5
ԲԱՐԵՓՈՒՈՒՄՆԵՐԻ ՍՇՄԿՄԱՆ ՍԿՋԲՆԱԿԱՆ ՇՐՋԱՆ ՄԻՆԶԵՎ 2007 ԹՎԱԿԱՆԸ	5
ԾՐԱԳՐԻ ՍՈՍՋԻՍԴԱՑՄԱՆ ԽՈՐՀՐԴԱՐՄԱՆԱԿԱՆ ՇՐՋԱՆ 2008-2010 ԹԹ.....	11
ՀԱՆՐԱՅԻՆ ԸՆԴՎՋՄԱՆ և ՍԱՀՄԱՆԱԴՐՄԱԿԱՆ ՊԱՅԲԱՐԻ ՇՐՋԱՆ 2013-2015 ԹԹ.....	19
 ՄԱՍ 2. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ԲԱՐԵՓՈՒՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ	27
 ՄԱՍ 3. ԿԵՆՍԱԹՈՇՈՇՄԱՅԻՆ ԲԱՐԵՓՈՒՈՒՄՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁԸ	33
 ՄԱՍ 4. ԿՈՒՏԱԿԱՅԻՆ ԿԵՆՍԱԹՈՇՈՇՄԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ, ՈՒՍԿԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ	47
 ՄԱՍ 5. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՆՈՐ ԿԵՆՍԱԹՈՇՈՇՄԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ	65
 ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ	73

Վերլուծությունը կատարված է
ՀՀԳ Բյուրոյի տնտեսական հետազոտությունների գրասենյակի կողմից.
Հրայր Սարուխեան Հիմնադրամը աջակցում է վերլուծության տարածմանը

Շապիկի լուսանկարները՝ ՖՈՏՈՒՈՒՐ գործակալություն
Ջևալորումն ու Էջադրամը՝ Գրիգոր Հակոբյան



Սիրելի հայրենակիցներ,

Կենսաթոշակային համակարգը երկրի քաղաքական, տնտեսական և սոցիալական անվտանգության տեսանկյունից կարևորագույն գործոններից է, որի արդյունավետ և առողջ կենսագործունեությամբ մեծապես պայմանավորված են երկրի սոցիալ-տնտեսական, բյուջետային կայունությունը, քաղաքացիների ընդհանուր բարեկեցությունը, հասարակության ունակությունը հոգ տանել իր անդամների մասին մինչև խորը ծերություն:

Սյդ համակարգի բարեփոխման և ավելի արդյունավետ դարձնելու հարցը ցանկացած երկրի կարևորագույն մարտահրավերներից է: Ենթան բարեփոխման գործընթացը ամենաներկար ռազմավարական ծրագրային քաղաքականությունն է, որը կարող է պետությունը ընդունել մի քանի տասնամյակների հաշվարկով:

Հայաստանի Հանրապետության կենսաթոշակային համակարգը նույնպես կարիք է զգում բարեփոխման: Հաշվի առնելով հարցի կարևորությունը և հանրային մեծ ուշադրությունը Հայ Յեղափոխական Դաշնակցության տնտեսական հետազոտությունների գրասենյակը սիրով Ձեզ է ներկայացնում իր հերթական հետազոտությունը՝ նվիրված Հայաստանի կուտակային կենսաթոշակային համակարգի խնդիրներին և լուծման այլընտրանքային ուղիներին:

Խնդիրը առավել կարևորվում է այն հանգամանքով, որ Հայ Յեղափոխական Դաշնակցությունը ներկայումս կիրառվող համակարգի առաջին և սկզբունքային ընդդիմախոսն է: Դեռ 2000-ական թվականների սկզբից Դաշնակցության ներկայացուցիչները ինչպես երկրի գործադիր և օրենսդիր մարմիններում, այնպես էլ մասնագիտական շրջանակներում մշտապես հայտնել են իրենց տեսակետը սույն բարեփոխումների վերաբերյալ:

ՀՅԴ սկզբունքային դիրքորոշման մասին նախ և առաջ լավատեղյակ են մեր ընդդիմախոսները՝ սույն համակարգի նախաձեռնողներն ու իրականացնողները:

Այդ պատճառով այսօր կարևորում ենք նաև համապատասխան տեղեկատվության տրամադրումը մեր հանրությանը՝ վերջինիս գերծ պահելով ապատեղեկատվությունից և ոչ հավաստի տեղեկություններից: ՀՀԴ որևէ գործիչ երբեք չի հայտարարել սույն համակարգին կուսակցության աջակցության մասին: Ավելին՝ սույն համակարգի Դաշնակցության քննադատությունը ունի խոր արմատներ, հիմնված է մասնագիտական լուրջ վերլուծության և սկզբունքային դիրքորոշման վրա:

Հույս ունենք, որ սույն հրատարակությունը նոր առիթ կտա Կառավարությանը, Ազգային ժողովին, քաղաքական ուժերին և լայն հանրությանը՝ վերանայել և բարեփոխել ներկայումս իրականացվող քաղաքականությունը:



ՄԱՍ 1.

ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ԲԱՐԵՓՈՒՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՍՈՒԹՅՈՒՆ

▶ ԲԱՐԵՓՈՒՈՒՄՆԵՐԻ ՄՇԱԿՍԱՆ ՍԿԶԲԵՍԿԱՆ ՇՐՋԱՆ ՄԻՆԶԵՎ 2007 ԹՎԱԿԱՆԸ

Հայաստանի Հանրապետությունում կենսաթոշակային համակարգի բարեփոխումների շուրջ քննարկումները սկսվել են դեռ 2000-ականների սկզբին:

2002 թվականի նոյեմբերի 19-ին ընդունված «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 76-րդ հոդվածը նախատեսել էր, որ կուտակային պարտադիր կենսաթոշակային համակարգի վճարումները սկսում են գործել աշխատավարձի աճին զուգընթաց հետևյալ պայմանների առկայության դեպքում՝

- i.** պարտադիր կենսաթոշակային սոցիալական ապահովագրության բյուջեն հաշվեկշռված է.
- ii.** պետական բյուջեի պակասուրդը չի գերազանցում հանրապետության համախառն ներքին արդյունքի մեկ տոկոսը.
- iii.** հանրապետությունում վերջին երկու տարում գրանցվել է տնտեսական աճ, սաննավորապես, համախառն ներքին արդյունքը նախորդ տարվա համեմատությամբ աճել է առնվազն երկու տոկոսով.
- iv.** անհատական (անձնավորված) հաշվառման համակարգը լիարժեք գործում է:

2005 թվականի ապրիլի 28-ին ՀՀ կառավարության թիվ 666-Ն որոշմամբ հաստատվում են Հայաստանի Հանրապետության կենսաթոշակային ապահովության համակարգի բարեփոխումների հայեցակարգային սնուցումները:

Կառավարության կողմից հաստատված փաստաթուղթը սահմանում է, որ «վերափոխումները չպետք է բերեն հաջորդ սերնդի հարկային բեռի և պետական պարտքի անկայունության: Սա ենթադրում է, որ հարկային դրույքների որևէ բարձրացում անթույլատրելի է, այդ թվում՝ վերափոխման ներքո թողարկված պարտքի հետագա սպասարկման հետ կապված»:

Հայեցակարգային սնուեցումները իրավացիորեն նշում են աշխատավարձի չափի ոչ որոշիչ լինելը հետագա թոշակի նշանակման հարցում, ինչպես նաև խնդիր համարում սովերային զբաղվածությունը և շահագրգռվածության բացակայությունը ցույց տալու իրական եկամուտները, ակնկալվելով նոր համակարգի ներդրմամբ խթանել թափանցիկ աշխատանքը:

Կառավարությունը արձանագրել էր, որ թեև մեկ թոշակառուին բաժին է հասնում 2,3 զբաղված, դա իրականությանը չի համապատասխանում, քանի որ մի շարք կատեգորիաները հանելով (զինվորականներ, ուսանողներ, հողերի սեփականատերեր) կարող է ստացվել 1/1, այնինչ եվրոպական երկրներում հարաբերակցությունը 3,5/1:

Կառավարությունը հայտարարել էր եռաստիճան կենսաթոշակային համակարգի ստեղծման ստադիոյության մասին՝

- i.** պետական կենսաթոշակային ապահովություն,
- ii.** պարտադիր կուտակային կենսաթոշակային ապահովագրություն,
- iii.** կանավոր կենսաթոշակային ապահովագրություն:

Ընդ որում պետական կենսաթոշակը պետք է լինի ոչ մեծ՝ միջին աշխատավարձի մինչև 25 տոկոսի չափով, որպեսզի չխաթարի կուտակայինի գործունեությունը:

Սույն ծրագիրը իրականացնելու նախապայմաններ են հայտարարվում պետական բյուջեի հնարավորությունը՝ փոխհատուցել պակասուրդը և դժվարություններ:



րը հաղթահարելու համար հետևյալ պայմանների առկայությունը, որոնք մասամբ կրկնում են «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի դրույթները՝

- iv.** պետությունից պակասուրդի ցածր մակարդակ (ՀՆԱ-ի 1 տոկոսից ոչ ավելի),
- v.** հանրապետությունում առնվազն 2 տոկոս իրական տնտեսական աճի առկայություն վերջին մի քանի տարվա ընթացքում,
- vi.** արժեթղթերի շուկայի հարաբերական զարգացածություն,
- vii.** պետական ինստիտուցիոնալ կառույցների առկայություն, որոնք անհրաժեշտ են կուտակային ապահովագրության գործունեության համար, մասնավորապես, պետական հատուկ վերահսկիչ մարմնի և լիարժեք նորմատիվ իրավական բազայի առկայություն,
- viii.** անձնավորված հաշվառման համակարգի լիարժեք ներդրում:

Կենսաթոշակների բարեփոխման համար կարևորագույն նախապայման է հայտարարվում հասարակության իրազեկման աշխատանքը՝ համաժողովրդական ընդգրկում քննարկումներ, բանավեճեր, սեմինարներ և այլն:

Կառավարությունը ծրագրում էր վերը նշված սկզբունքների հիման վրա սկսել սինույացիաների և ակտուարական հաշվարկների իրականացումը:

Սյապիտով, կարելի է արձանագրել.

- ❑ Պետական պարտքի աճի վտանգը նկատվում էր դեռ 13 տարի առաջ, սակայն գործընթացը գնաց այլ ուղղությամբ՝ 2005 թվականին պետական պարտքը կազմում էր 1,2 մլրդ. ԱՄՆ դոլար, իսկ այսօր արդեն 6,7 մլրդ. ԱՄՆ դոլար:
- ❑ Փաստաթուղթը վկայում է այդ պահին գործող թոշակի չափը՝ միջինը 9300 ՀՀ դրամ: Սակայն ընդամենը մի քանի տարի հետո միջին թոշակը գե-

րազանցեց 2005 թվականի ցուցանիշը ավելի քան երեք անգամ, առանց կուտակային համակարգի ներդրման, բացառապես տնտեսական աճի և երկրի զարգացման հաշվին: Ավելին՝ նոր համակարգի գործարկումից հետո պետական բյուջեով քաղաքացիների աշխատավարձերի և թոշակների էական աճ չի նախատեսվել:

- ❑ Նշված փաստաթղթում ակնհայտ է անհամապատասխանություն և թվերի խեղաթյուրում: Կառավարությունը ընդունում է բազմաթիվ չգրանցված աշխատակիցների առկայությունը, սակայն չվճարողներին հանելով գբաղվածների թվից, չի ներառում սովերը և հայտարարում աշխատողների և թոշակառուների 1/1 ցուցանիշը: Սկնհայտ է, որ հատկապես 2005 թվականի պատկերը նկատի ունենալով՝ շինարարական ոլորտի շեշտակի զարգացում, անվերահսկելի տոնավաճառային բիզնեսի առկայություն, փոքր և միջին բիզնեսի զարգացում, փաստացի եկանուտ ստեղծող և կենսաթոշակային վճար չվճարողների թիվը կարող էր գերազանցել 2,3 ցուցանիշը:
- ❑ Որքանով իրականացվեց հանրային իրազեկման աշխատանքը փաստում է 2010 թվականին, հասարակության անտեղյակության և անտարբերության պայմաններում, օրենսդրական փաթեթի ընդունումը, որին հակադարձեց քաղաքական դաշտի միայն մի փոքր հատվածը:
- ❑ Կառավարության կողմից իր իսկ առջև դրված ֆինանսական կայունությունը ապահովող բոլոր նախապայմանների առկայությունը մինչև համակարգի ներդրումը այդպես, էլ չապահովվեց: Ապահովված չի նաև այսօր:

.....

2006 թվականի մայիսի 26-ին ՀՀ կառավարության «Հայաստանի Հանրապետության կենսաթոշակային ապահովության համակարգի բարեփոխումների հայեցակարգը հաստատելու մասին» թիվ 796-Ն որոշմամբ հաստատվում է համապատասխան հայեցակարգը: Կառավարությունը ուժը կորցրած է ճանաչում թիվ 666-Ն որոշումը և օրենսդրական փաթեթի կազմումը վերապահում ոչ թե ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարին (ինչպես

նախորդ որոշմամբ էր), այլ ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարին և ՀՀ կենտրոնական բանկի նախագահին:

«Հայաստանի Հանրապետության կառավարությունն արձանագրում է, որ այդ որոշմամբ սահմանված սույն հայեցակարգի ձևավորման նախապայման հանդիսացող բոլոր գործողություններն իրականացված են», ինչպես նաև հայտարարում, որ «Նոր համակարգի ներդրումը կսկսվի 2008 թվականի հունվարի 1-ից»:

Ըստ Հայեցակարգի «Նոր կենսաթոշակային համակարգը կներառի հետևյալ 4 աստիճանը՝ (ա) նվազագույն ծերության սոցիալական նպաստ, (բ) բազային կենսաթոշակ, (գ) պարտադիր մասնավոր կուտակային կենսաթոշակ և (դ) կանավոր կուտակային կենսաթոշակ»:

Սեռաչինքն պետք է ստանան նրանք, ովքեր իրենց կյանքի ընթացքում եղել են աղքատ և ունեն ոչ բավարար աշխատանքային պատմություն կամ եղել են գործազուրկ: Նրանք միաժամանակ չեն կարող այլ աղքատներից ստանալ այլ եկամուտ:

Բազային թոշակը ստանում են այն քաղաքացիները, որոնք իրենց կենսաթոշակը ստանում են պարտադիր կուտակային համակարգից և չեն ստանում նվազագույն ծերության սոցիալական նպաստ: Ընդ որում իրենց թոշակի չափը պետական բյուջեից փոխանցվում է կենսաթոշակառուի պարտադիր կուտակային հիմնադրամի՝ վերջինիս անհատական հաշվին:

Սակայն նոր համակարգի հիմնաքար է հայտարարվում պարտադիր մասնավոր կուտակային կենսաթոշակը, որի ստացողները նաև պետք է ստանան բազային թոշակը: Նախատեսվում էր իրենց կյանքի ընթացքում այդ քաղաքացիներից գանձել 10 տոկոս:

Նոր համակարգ անցածները մասնավոր կենսաթոշակային հիմնադրամներից կան պետք է ստանան 15 տարվա թոշակ կամ գնեն կյանքի ապահովագրություն (անուիտետ):

Մյապիտով, կարելի է արձանագրել.

- ❑ Ծրագրի փաստացի պատասխանատու հայտարարվում է Կենտրոնական բանկը:
- ❑ Թեև 2005 թվականին սահմանված նախապայմանները չեն կատարվել, Կառավարությունը այնուամենայնիվ հայտարարում է դրանց կատարման մասին:
- ❑ Ներկայացվող մանրամասները վկայում են, որ ըստ էության ծրագրվում է կենսաթոշակային համակարգի սահմանափակում՝ պետությունը վճարելու է միայն ծերության սոցիալական նպաստ աղքատներին, իսկ բազիսային և կուտակայինը, իսկ հետագայում միայն կուտակայինը վճարվելու է մասնավոր հիմնադրամների կողմից:
- ❑ Կուտակային կենսաթոշակի չափը կարող է հայտնի լինել կյանքի ապահովագրության գնումից հետո:
- ❑ Ծրագիրը առաջացնում է նոր ռիսկեր (օրինակ, ժողովրդագրական. մի քանի երեխա ունեցող կանայք դատապարտվում են աղքատության և միայն ծերության նպաստի, իսկ երիտասարդ աղջիկները թոշակ ստանալու համար պետք է հետաձգեն ընտանիք կազմելու ծրագրերը կամ սահմանափակվեն մեկ երեխայով), ինչի մասին հաջորդիվ:

Հարկ է նշել, որ սույն բարեփոխումների նախաձեռնումը, հայեցակարգի մշակումը և ողջ գործընթացը ի սկզբանե իրականացվել է ՀՀ կենտրոնական բանկի կողմից: Ինչը բացառիկ երևույթ է համաշխարհային կենսաթոշակային բարեփոխումների շարքում:

ԿԲ կողմից ծրագրի իրականացումը պայմանավորված էր այն հանգամանքով, որ սույն նախագծի իրականացման հիմնական նպատակը ոչ թե կենսաթոշակային խնդիրներն էին, այլ ֆինանսական շուկայի համար հավելյալ միջոցների ներգրավումը:



Պետ այդ շրջանում Կենտրոնական բանկի կողմից իրականացվող սույն բարեփոխման էությունը միանշանակ չի ընդունվում գործադիրում և հանրության կողմից: Սա նաև այն եզակի դեպքերից էր, երբ գործող Կառավարության անդամը դեմ է քվեարկում իր ոլորտին առնչվող հարցին:¹

Հետաքրքրական է, որ նոր բարեփոխումներին ընդդիմանում է նաև հանրային հատվածը, որի բազմաթիվ ներկայացուցիչներ առաջին հրապարակային քննարումներից մեկի ժամանակ բավական քննադատական են վերաբերում ներկայացվող առաջարկություններին: Այդ ժամանակահատվածում բարեփոխումները նախաձեռնող և իրականացնող թիմը ցանկություն էր հայտնել հնարավորության դեպքում այն ընդունել մինչև 2007 թվականի մայիսյան խորհրդարանական ընտրությունները, պատճառաբանելով, որ հայտնի չէ ինչպիսի վերաբերմունք կարող է ունենալ նոր Ազգային ժողովը ոչ ժողովրդական նախագծի նկատմամբ²:

Լինելով զգայուն ոչ միայն մասնագիտական, այլ նաև քաղաքական տեսակետից, բարեփոխումների սկիզբը հետաձգվում է մինչև 2014 թվական 2007 և 2008 թթ., իսկ այնուհետև՝ նաև 2012 և 2013 թվականների ընտրությունների պատճառով:

▶ ԾՐԱԳՐԻ ԱՌԱՋԻՍԴԱՑՄԱՆ ԽՈՐՀՐԳՄԱՆԱԿԱՆ ՇՐՋԱՆ 2008–2010 ԹԹ.

Կենսաթոշակային բարեփոխումների իրականացումը և օրենսդրական փաթեթի ընդունման աշխատանքները մեծ թափ են ստանում 2008 թվականից, երբ Հայաստանի Հանրապետության վարչապետ նշանակվեց Տիգրան Սարգսյանը:

1 2006 թվականի ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարն էր Սղվան Վարդանյանը, որը դեմ քվեարկեց Կառավարության որոշմանը: 2018-ին պատմությունը կրկնվեց՝ Կառավարություն բերվեց սոցիալական ոլորտին առնչվող նախաձեռնություն առանց աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար Սանն Թանդիլյանի:

2 Բարեփոխումները հանրային սեկտորի ներկայացուցիչներին ներկայացրել է ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի անդամ Վաչե Գաբրիելյանը՝ 2006 թվականին Թեքելյան նշակության կենտրոնում:

ՀՀ կառավարության 2008 թվականի նոյեմբերի 13-ի թիվ 1487-Ն որոշմամբ հաստատվում են Հայաստանի Հանրապետության կենսաթոշակային բարեփոխումների ծրագիրը և կենսաթոշակային բարեփոխումների իրականացումն ապահովող միջոցառումների ժամանակացույցը:

2008 թվականին ներկայացված ծրագիրը, ըստ էության, շատ մոտ է այն համակարգին, որը 2010 թվականին օրենսդրական փաթեթով ներկայացվում է խորհրդարան: Կառավարությունը կատարում է մի շարք լրացումներ և փոփոխություններ, հաշվի առնելով առկա քննադատությունը, իսկ փաստաթուղթը կրում է 2007 թվականի ընտրությունների ազդեցությունը:

Սյսպես, Կառավարությունը արդեն մատնանշում է երկու կարևորագույն արդյունքների նվաճման խնդիր՝

«1) կենսաթոշակների չափերի ամենամյա բարձրացում՝ կենսապահովման նվազագույն զանրյուղին համարժեք միջին աշխատանքային (ապահովագրական) կենսաթոշակի չափի ապահովմամբ.

2) պարտադիր կուտակային կենսաթոշակային համակարգի ներդրմամբ անձի եկամտի և կենսաթոշակի չափի միջև կապի հաստատում»:

Խնդիրը իր արմատներով, հասնում է 2004 թվական: Սարտի 16-ին, ՀՀ Ազգային ժողովը, ՀՅԴ խնդրակցության առաջարկությամբ ընդունում է «Կենսապահովման նվազագույն զանրյուղի և կենսապահովման նվազագույն բյուջեի մասին» ՀՀ օրենքը: Կառավարությունը նման թիրախ նշելով փորձում էր մեղմել այն փաստը, որ այդ օրենքը այդպես էլ չի գործադրվել, ինչը մշտապես արժանանում էր ՀՅԴ խնդրակցության քննադատությանը: Օրենքով նախատեսված էր, որ Կառավարությունը պետք է սահմանի կենսապահովման նվազագույն զանրյուղի կազմն ու կառուցվածքը, որի հիման վրա հաշվարկվող կենսապահովման նվազագույն բյուջեն պետք է ընկած լիներ իրականացվող սոցիալական քաղաքականության հիմքում³

3 Օրենքը գործում է մինչ օրս, սակայն Կառավարությունը այդպես էլ չիրականացրեց այդ օրենքով իր վրա դրված պարտականությունները:



Մյուս հետաքրքիր փաստը, որը արձանագրում է Կառավարությունը, վերաբերում էր 2008 թվականին պարտադիր սոցիալական ապահովագրության բյուջեի և պարտադիր սոցիալական ապահովության վճարների ներառմանը պետական բյուջեի ընդհանուր եկանուտներում, ինչը հնարավոր դարձրեց պետական բյուջեի ընդհանուր եկանուտների հաշվին ապահովել կենսաթոշակների չափերի 60 տոկոս բարձրացումը:

Նշված խնդրի ակունքները հարկավոր է փնտրել 2007 թվականի մայիսյան ընտրությունների նախընտրական շրջանում: Հասարակությունում լայն բանավեճ ծավալվեց ՀՀԴ 2007 թվականի նախընտրական ծրագրի մի շարք թիրախային ցուցանիշների շուրջ, մասնավորապես՝ երկրում սովերային տնտեսության ծավալների և աշխատավարձերի ու թոշակների բարձրացման հնարավորության վերաբերյալ:

Հաշվի առնելով սպասվող նախագահական ընտրությունները, Կառավարությունը 2008թ. պետական բյուջեյով նախատեսում է համապատասխան բարձրացումները:

Կառավարությունը, հիշատակելով 60 տոկոսով բարձրացումը, ակնարկում է, որ հետագայում նման բարձրացումներ այլևս անել հնարավոր չի լինի՝ գործող համակարգի դեպքում և խնդիրը հարկավոր է լուծել բացառապես նոր կուտակային համակարգի շրջանակներում. «Ակնհայտ է, որ կենսաթոշակների չափերի հետագա բարձրացումն ու երկարաժամկետ պահպանումը «մեծ բեռ» է դառնալու պետական բյուջեի համար»:

Ծրագրում Կառավարությունը նշում է մի շարք սարտահրավերներ՝ 1945-ից հետո հետպատերազմյան ծնելիության բում, «բնակչության ծերացում», մեծ ծավալների ոչ ֆորմալ տնտեսության առկայություն, ծնելիության կրճատում և այլն: Վտանգ է համարվում աշխատող/թոշակառու 1/1 հարաբերակցությունը, կանխատեսելով թոշակառուների թվի գերազանցում արդեն 2011 թվականին:

Ծրագիրը ներկայացնելով «5 տոկոս աշխատողից և 5 տոկոս պետական բյուջեից» սխեման միաժամանակ պարտավորվում է այդ քաղաքացիներին վճարել նաև հիմնական կենսաթոշակը՝ պետական բյուջեից:

Այսպիսով, կարելի է արձանագրել.

- ❑ Առաջարկվող բարեփոխումների վերաբերյալ մտահոգություններ են հայտնում Արժույթի միջազգային հիմնադրամի և Համաշխարհային բանկի փորձագետները, մատնանշելով մի շարք ռիսկեր՝ ժողովրդագրական, մակրոտնտեսական, ֆինանսական շուկաների և այլն:
- ❑ Կառավարությունը ժողովրդագրական խնդիրներով, սովերային տնտեսության առկայությամբ, ինչպես նաև սոցիալական անարդարությամբ պայմանավորված մարտահրավերների լուծումը տեսնում է ոչ թե այդ ոլորտներում հետևողական բարեփոխումների իրականացման, այլ կուտակային կենսաթոշակային համակարգի ներդրման միջոցով:
- ❑ Կառավարությունը, 2007 թվականի խորհրդարանական նախընտրական շրջանի դասերը նկատի ունենալով, ինչպես նաև 2008 թվականի նախագահական ընտրություններին և սույն բարեփոխումներին ընդառաջ, բարձրացնում է թոշակներն ու աշխատավարձերը՝ բացառելով հետագայում նման բարձրացումը:
- ❑ Հաշվի առնելով քննարկումների ժամանակ հնչող քննադատությունը միայն մասնավոր կուտակային կենսաթոշակային համակարգի ռիսկի վերաբերյալ, ավելացնում է դրույթ բոլոր քաղաքացիներին պետական կենսաթոշակ վճարելու պարտավորության վերաբերյալ:



2010 թվականին մեծ օրենսդրական փաթեթը ՀՀ կառավարությունը ներկայացրեց խորհրդարան: Այն ժամանակ հրապարակային ելույթներում, հարցազրույցներում, ասուլիսներում հարցին անդրադառնում էին մի շարք տնտեսագետներ, ինչպես նաև ԱԺ ՀՅԴ խմբակցության ներկայացուցիչները:

Կառավարության կողմից հավանության արժանացած փաթեթի շուրջ առաջին հիմնական հրապարակային բանավեճերը սկսվեցին 2008-ին: Խնդրին անտարբեր չմնացին սպիտաքահայ սմանագետները: Չիլիացի տնտեսա-



գետ Արմեն Գույումճեանը⁴ հայտարարեց. «Հայ ժողովուրդը իր պատմության ընթացքին, բացնաթիւ անգամներ չարչարուած է: Պէտք չ'ունի ուրիշ զօրաւոր հարուած սը ևս ստանալու», իսկ տնտեսագետ, պրոֆեսոր Արա Խանջյանը⁵, իր հողվածում, ուշադրություն է հրավիրում նախատեսվող ծրագրի մեջ առկա ռիսկերին՝ աշխատաշուկայի, ֆինանսական շուկաների, ներքին ֆինանսական շուկայի անկատարության և ֆինանսական կարգավորման, կոռուպցիոն, ինչպէս նաև նոր համակարգի ծախսատարության ռիսկեր⁶:

Սամվել Ավագյանը «Կապիտալում» գրում է. «Նախորդ օրը, երբ «Հայացք» ակումբում բանավիճում էին Ազգային ժողովի ՀՅԴ խմբակցության անդամ Արա Նճանյանը, ԱԺ ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Գագիկ Մինասյանն ու ֆինանսների փոխնախարար Վարդան Արանյանը, Դաշնակցության ներկայացուցիչը սենսացիոն հայտարարություն արեց կենսաթոշակային բարեփոխումների վերաբերյալ՝ դրանք անվանելով «կործանարար»: Քանի որ կառավարությունն էապես կարևորում է այս բարեփոխումները, իսկ հասարակության տեղեկացվածության աստիճանը դեռևս բարձր չէ, որոշեցինք առանց էական խմբագրման ներկայացնել բանավեճի մասնակիցների կարծիքները՝ հուսալով, որ կլինեն այլ արձագանքներ ևս»⁷:

Ի պաշտպանության Կառավարության նախաձեռնության Վ. Արանյանը հայտարարում է՝ «Մեր գենդերային վիճակը այնպիսին է, որ մի քանի տարի հետո լուրջ խնդիրներ ենք ունենալու, չենք կարողանալու կենսաթոշակներ վճարել», իսկ Գագիկ Մինասյանը լրացնում. «Արևմտյան աշխարհը կործանվում է հենց այն պատճառով, որ ինքն այդպիսի համակարգ չունի»:

Ազգային ժողովում կենսաթոշակային օրենսդրական փաթեթը առաջին ընթերցման քննարկվեց 2010 թվականի հունիսի 23-ի արտահերթ նստաշրջանում:

4 Արմեն Գույումճեանը ներկայացնում է իր դիրքորոշումը «Հետք» կայքէջին, 2008 թվականին (անգլերեն):

5 Արա Խանջյանը կենսաթոշակային բարեփոխումների հարցով զբաղվել է գործընթացի սկզբնական շրջանից, պարբերաբար հանդես գալով քննադատական դիրքորոշումով:

6 Սապարեզ, 25 հունվարի 2010թ.

7 Կապիտալ Բիզնես Օրաթերք, 2010թ. հունվարի 29, թիվ 14 (527)

Հիմնական զեկուցողը ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար Սրտեն Ասատրյանն էր, իսկ հարակից զեկուցողը՝ ՀՀ ՍԺ սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Հակոբ Հակոբյանը:

Առաջին ընթերցմամբ քննարկման ամբողջական տղագրությունը տես՝ <http://parliament.am/transcript.php?AgendaID=2025&day=23&month=06&year=2010%E2%8C%A9=arm#23.06.2010>

Առաջին ընթերցմամբ անհատական քվեարկության արդյունքները 2010 թվականի հունիսի 24-ին՝ <http://parliament.am/register.php?do=bulletin&ID=3890>

Կողմ 70, Դեմ 14: Կողմ են արտահայտվել ՀՀԿ, ԲՀԿ, ՕԵԿ խմբակցությունները: Դեմ՝ ՀՅԴ և «Ժառանգություն» խմբակցությունները:

Վ. Հովհաննիսյանը քվեարկությունից առաջ առաջարկում է մեծամասնությանը քննարկել բարեփոխումները հանրաքվեի դնելու հարցը.

*«Ուզում եմ հիշեցնել խորհրդարանի մեր քաղաքական մեծամասնությանը՝ մենք համարում ենք, որ այս հարցը միայն ու միայն կարող է վճռվել **հասնաժողովրդական հանրաքվեով կամ զոնե պլեբիսցիտով**, որովհետև, ի վերջո, հարցը վերաբերում է ապագա սերունդներին: Եվ այսօրվա **Կառավարությունը, այսօրվա քաղաքական մեծամասնությունը, այսօրվա խորհրդարանը իրավունք չունեն ձայների թվաքանակական մեծամասնությամբ որոշել մի քանի սերնդի ճակատագիրը**»:*

Օրենսդրական փաթեթը երկրորդ և երրորդ ընթերցմամբ քննարկվեց և ընդունվեց 2010 թվականի դեկտեմբերի 20-ին սկսված արտահերթ նստաշրջանում: Ամբողջական տղագրությունը տես՝

<http://parliament.am/transcript.php?AgendaID=2109&day=20&month=12&year=2010&lang=arm#20.12.2010>

Երկրորդ ընթերցմամբ անհատական քվեարկության արդյունքները 21.12.2010թ.-ին՝ <http://parliament.am/register.php?do=bulletin&ID=4121>

Կողմ 72, Դեմ 1, Ձեռնպահ 1

Երեք խմբակցություն կողմ է քվեարկել՝ ՀՀԿ, ԲՀԿ, ՕԵԿ:

Վահան Հովհաննիսյանը քվեարկությունից առաջ հայտարարում է, որ խմբակցությունը չի մասնակցելու քվեարկությանը և պնդում է ՀՅԴ դիրքորոշումը, որ *«այդ հարցը հասնաժողովրդական քննարկմանն է արժանի, այլ ոչ թե՛ խորհրդարանի»:*

Քվեարկությանը չմասնակցելու մասին «Ժառանգություն» խմբակցության անունից հայտարարում է նաև Սոյոուպա Սաֆարյանը:

Փաթեթի ընդունման տապալման վերջին փորձը ՀՅԴ խմբակցությունը անում է երրորդ ընթերցման քվեարկության ժամանակ դեկտեմբերի 22-ին: Սղագրությունը տես՝

<http://parliament.am/transcript.php?AgendaID=2115&day=22&month=12&year=2010&lang=arm=22.12.2010>

Քանի որ եղել են նախադեպեր, երբ քաղաքական փոքրամասնությունը, չմասնակցելով քվեարկությանը, կարողացել է ազդել քվորումի վրա (66-ից պակաս մասնակիցների դեպքում հարցը չէր ընդունվում և դուրս գալիս օրակարգից) նման վերջին փորձը անելով Վ. Հովհաննիսյանը հայտարարում է.

«Ես կարծում եմ, նորից մեր փաստարկները հնչեցնելու կարիք չկա: Մենք կոչ ենք անում պարասիսանարվոթյանը վերաբերվել բոլոր ֆրակցիաների ներկայացուցիչներին, անկախ պարզամտավորներին և չքվեարկել, չքվեարկել այս վրանգավոր նախաձեռնությանը կողմ, չքվեարկել ընդհանրապես»:

Հարցը ընդունվում է **69 կողմով (1 դեմ):** Կողմ երեք խմբակցություն՝ ՀՀԿ, ԲՀԿ, ՕԵԿ:

Երրորդ ընթերցման անհատական քվեարկության արդյունքները տես՝

<http://www.parliament.am/register.php?do=bulletin&ID=4149>

Օրենսդրական փաթեթով առաջարկվող ծրագրի մանրամասն վերլուծությունը, հաշվի առնելով խորհրդարանական քննարկումների ժամանակ Կառավարության, քաղաքական մեծամասնության և ընդդիմության փաստարկները, տրված են սույն փաստաթղթի՝ «Կենսաթոշակային բարեփոխումների մարտահրավերները, ռիսկերն ու խնդիրները» Մաս 4-ում:

Սյապիտով, կարելի է արձանագրել.

- ❑ Կենսաթոշակային բարեփոխումների քննադատությամբ հանդես են եկել ինչպես Սփյուռքի, այնպես էլ Հայաստանի մասնագետներ և քաղաքական գործիչներ:
- ❑ Կառավարությունը, մինչև փաթեթի ընդունումը, չապահովեց հանրային իրազեկման և հանրության ներգրավման բավարար աստիճան:
- ❑ Թեև խորհրդարանական ընդդիմությունը, ի դեմս ՀՅԴ և «Ժառանգություն» խմբակցությունների, փորձել է տապալել օրենսդրական փաթեթի ընդունումը, այդ թվում՝ չմասնակցելով քվեարկությանը, քաղաքական մեծամասնությանը, ի դեմս երեք խմբակցությունների, հաջողվել է ընդունել օրենքների փաթեթը:
- ❑ Թեև այդ շրջանում բազմաթիվ լրատվամիջոցներ՝ lin.am, hetq.am, cdaily.am, iragir.am, news.am, yerkir.am, alplus.am, 7or.am և այլն, լուսաբանել են խորհրդարանական քննարկումները և պարբերաբար հրապարակել խնդրի շուրջ բանավեճի մասնակիցների տեսակետները, ընդհանուր առմամբ հանրությունը մնաց անտեղյակ սպասվող փոփոխություններից և քաղաքական մեծամասնությանը հաջողվեց ընդունել փաստաթուղթը առանց հանրային դիմադրության:
- ❑ ՀՀ ԱԺ ՀՅԴ խմբակցության ղեկավար Վահան Հովհաննիսյանի բազմիցս հնչեցրած առաջարկությունը՝ հարցը դնել հանրաքվեի, իշխանությունների կողմից մնաց անպատասխան:



▶ ՀԱՆՐԱՅԻՆ ԸՆԴՎՋՄԱՆ և ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ՇՐՋԱՆ 2013–2015 ԹԹ.

2011 թվականից Կառավարությունը սկսեց բարեփոխումների ավելի համարձակ ներկայացումը, քանի որ առանց հասարակության լայն իրազեկման այլևս հնարավոր չէր: 2011 թվականի գարնանը, ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանի հրավերով, Հայաստան ժամանեց Պինդեոտի օրոք Չիլիի մասնավոր կենսաթոշակային համակարգի հիմնադիրներից մեկը՝ Խոսե Պինիերան՝ «կիսավերու համար կենսաթոշակային բարեփոխումների վերաբերյալ այն փորձով, որն առկա է Չիլիում»: Չիլիի իրական փորձի մասին տես սույն վերլուծության Մաս 3-ում:

Հանրային ակտիվ ընդգնան շրջանը սկսվեց 2013 թվականի աշնանից, և հիմնականում կապվում է **ԴԵՍ ԵՄ** քաղաքացիական և ՀՅԴ Նիկոլ Աղբալյան ուսանողական միության **STOP** շարժումների, ինչպես նաև նրանց աջակցող քաղաքական ուժերի գործունեության հետ: Հանրային ընդգնան շրջանում կազմակերպվեցին մի շարք հանրային իրազեկման և բողոքի միջոցառումներ՝ հավաքներ, քայլարշավներ, նստացույցեր և այլն: Շարժումը նաև դիմեց խորհրդարանական ուժերին: Այս շարժմանը սատարելու մասին հայտարարեցին նաև այն ուժերը, որոնց աջակցությամբ 2010 թվականին ընդունվեց կենսաթոշակային փաթեթը:

2013 թվականի դեկտեմբերի 16-ին, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի թվով 36 պատգամավորների ստորագրությամբ, դիմում ներկայացվեց Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարան: Դիմումի համաձայն՝ դժնբաց դատական նիստում, բանավոր ընթացակարգով քննվեց «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 5, 7, 8, 37, 38, 45, 49 և 86-րդ հոդվածների սահմանադրականության հարցը: Մասնավորապես՝ առաջարկվում էր գործը քննարկել պետության պոզիտիվ պարտավորության ապահովման, սեփական իրավունքի պաշտպանության, տարիքային և գույքային վիճակով պայմանավորված խտրականության կիրառման անթույլատրելիության, համաչափության, որոշակիության սահմանադրական նորմերի և սկզբունքների համատեքստում:

2014 թվականի ապրիլի 2-ին հրապարակվեց ՀՀ Սահմանադրական դատարանի ՍԴՈ-1142 որոշումը, համաձայն որի.

- i.** «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի, 7-րդ հոդվածի 1-ին և 11-րդ մասերի, դրանց հետ համակարգային առումով փոխկապակցված՝ 13-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթները՝ այն մասով, որով չեն ապահովում յուրաքանչյուր անձի հայեցողությամբ իր սեփականություն հանդիսացող աշխատավարձի տիրապետման, օգտագործման և տնօրինման իրավունքը և հանգեցնում են մարդու կամաարտահայտությունից անկախ նրա սեփականության իրավունքի սահմանափակման, ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 8-րդ հոդվածի 1-ին մասի, 31 և 43-րդ հոդվածների պահանջներին հակասող և անվավեր:
- ii.** Իրավունքի գերակայության և իրավական որոշակիության սկզբունքների պահանջներին համարժեք իրավունքների պաշտպանության կոնկրետ երաշխիքներ չամրագրելու և տվյալ իրավահարաբերություններում գործադիր իշխանության հայեցողության սահմանները չհատակեցնելու հանգամանքից ելնելով՝ «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասը ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 1-ին հոդվածի, 3-րդ հոդվածի 2-րդ մասի և 83.5-րդ հոդվածի 1-ին կետի պահանջներին հակասող և անվավեր:
- iii.** Վեճի առարկա հոդվածների հետ համակարգային առումով փոխկապակցված՝ «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝ «... որի տնօրինման ... կարգն ու պայմանները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը» դրույթը և 44-րդ հոդվածի 1-ին մասը ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 83.5-րդ հոդվածի 1-ին կետի պահանջներին հակասող և անվավեր:
- iv.** Վեճի առարկա հոդվածների հետ համակարգային առումով փոխկապակցված՝ «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրա-



պետության օրենքի 41-րդ հոդվածի 4-րդ մասի՝ «Ռիսկերի կառավարման համակարգին ներկայացվող պահանջները սահմանվում են Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով» դրույթը ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 83.5-րդ հոդվածի 1-ին կետի պահանջներին հակասող և անվավեր:

- v. Վեճի առարկա հոդվածների հետ համակարգային առումով փոխկապակցված՝ «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 76-րդ հոդվածի 2-րդ մասի՝ գույքի արգելանքի միջոցով վարչական ակտի հիման վրա սեփականության իրավունքը սահմանափակող դրույթը՝ գույքի տնօրինման, տիրապետման կամ օգտագործման սահմանափակման միջոցով, ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 8-րդ հոդվածի 1-ին մասի, 31 և 43-րդ հոդվածների պահանջներին հակասող և անվավեր՝ հաշվի առնելով նաև, որ տվյալ դրույթին առնչվող իրավահարաբերությունները չեն վերաբերում քննության առարկա օրենքի իմաստով պարտադիր կուտակային վճար կատարողի /հարկային գործակալի/ անմիջական հարկային պարտավորությունների կատարմանը:
- vi. «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 2-10-րդ մասերի, 8, 37, 38, 45-րդ հոդվածների, 49-րդ հոդվածի 2-րդ մասի և 86-րդ հոդվածի վեճի առարկա դրույթները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը՝ սույն որոշման մեջ սահմանադրական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումների շրջանակներում՝ այն սահմանադրաիրավական բովանդակությամբ, համաձայն որի՝ **դրանցով նախատեսված իրավակարգավորումները չեն կարող հիմքում ունենալ, մեկնաբանվել և կիրառվել նարդկանց հայեցողությունից անկախ նրանց սեփականության իրավունքի սահմանափակում ենթադրող իրավակարգավորման համատեքստում, իսկ կենսաթոշակային ֆոնդի կառավարիչների իրավունքները պետք է իրացվեն միայն համարժեք պարտավորություններով հավասարակշռման սկզբունքին համապատասխան:**

vii. Հաշվի առնելով, որ «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը, սահմանափակված սույն որոշման եզրափակիչ մասի 1-5 կետերով Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը հակասող ճանաչված իրավադրույթները համակարգային առումով փոխկապակցված են Հայաստանի Հանրապետության շուրջ 50 օրենքներով և ութ տասնյակից ավելի այլ նորմատիվ իրավական ակտերով նախատեսված իրավակարգավորումների հետ, որոնց շատ դրույթներ սույն որոշման հիման վրա օրենքով սահմանված կարգով ենթակա են վերանայման, ինչպես նաև նկատի ունենալով օրենքի պահանջը՝ համակարգային առումով իրավական անվտանգությունը չխաթարելու վերաբերյալ, Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի 3-րդ մասի և «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 68-րդ հոդվածի 15-րդ մասի հիման վրա սույն որոշմանը Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը հակասող ճանաչված իրավանորմերի ուժը կորցնելու վերջնաժամկետ սահմանել 2014 թվականի սեպտեմբերի 30-ը՝ հնարավորություն տալով Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովին և Հայաստանի Հանրապետության կառավարությանը՝ իրենց իրավասության շրջանակներում «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և դրա հետ համակարգային առումով փոխկապակցված այլ օրենքների ու նորմատիվ իրավական ակտերի իրավակարգավորումները համապատասխանեցնելու սույն որոշման պահանջներին:

Սյապիտով, կարելի է արձանագրել.

- ❑ Հակասահմանադրական ճանաչվեց կուտակային վճարը:
- ❑ ՀՀ կենտրոնական բանկին վերապահված նորմատիվ ակտերի ընդունումը փոխանցվեց օրենսդիրին և այլն:
- ❑ Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանն արձանագրեց, որ միջազգային պրակտիկայում գործատուների և աշխատողների կողմից կատարվող սոցիալական ապահովության վճարների



տոկոսային հարաբերակցությունն այնպիսին է, որ հիմնականում գործատուների հաշվին են ձևավորվում սոցիալական ապահովության ընդհանուր նպատակային վճարների կեսից մինչև երկու երրորդը: Մնկախ թոշակային համակարգի առանձնահատկություններից, աշխարհի բազմաթիվ երկրների (Շվեդիա, ԱՄՆ, Մեծ Բրիտանիա, Ֆրանսիա, Սինգապուր, Լեհաստան, Հունգարիա, Սլովենիա, Խորվաթիա, Սլովակիա և այլն) փորձը վկայում է, որ համեմատաբար ավելի մեծ հաջողություն են արձանագրում այն երկրները, որտեղ կենսաթոշակային ապահովման խնդրի լուծմանը մասնակցում են երեք հիմնական սուբյեկտներ՝ պետությունը, գործատուն և աշխատողը:

ՀՀ սահմանադրական դատարանի 02.04.2014թ. թիվ ՍԴՈ-1142 որոշման պահանջները կատարելու նպատակով առանց հանրային քննարկումների ՀՀ կառավարությունը մշակել և ՀՀ Ազգային ժողովի քննարկմանն է ներկայացրել համապատասխան փաթեթ, որն ընդունվել է 2014 թվականի հունիսի 21-ին: Սույն փոփոխության շրջանակում կուտակային վճարը վերափոխվեց նպատակային սոցիալական վճարի՝ պահպանելով ողջ էությունը: Միաժամանակ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ հանրային պայքարում ընդգրկված էին հիմնականում մասնավոր հատվածի ներկայացուցիչները, ՀՀ կառավարությունը ներկայացրեց նոր անցումային դրույթներ, համաձայն որոնց՝ մասնավոր հատվածի աշխատողները կարող են 3 տարի (2017 թվականին ևս մեկ տարի ավելացվեց) հրաժարվել սոցիալական վճար կատարելու պարտականությունից՝ դիմում ներկայացնելով մինչև 2014 թվականի դեկտեմբերի 25-ը: Սրղյունքում՝ հանրային ընդվզման ալիքը թուլացավ և դանդաղեց:

Մյնուամենայնիվ, 2014 թվականի հոկտեմբերի 3-ին, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի թվով 33 պատգամավորների ստորագրությամբ, կրկին դիմում ներկայացվեց Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարան:

Ինչպես և նախորդ անգամ ՀՀ ԱԺ պատգամավորների ներկայացուցիչներն էին ՀՀ ԱԺ պատգամավոր Արծվիկ Մինասյանը, ինչպես նաև փաստաբաններ Արտակ Զեյնալլանը և Մերի Խաչատրյանը:

Դիմումի համաձայն՝ դրնբաց դատական նիստում, գրավոր ընթացակարգով քննվեց ՀՀ Ազգային ժողովի կողմից 21.06.2014թ. ընդունված՝ «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի /ՀՕ-67-Ն/ և կից՝ ՀՕ-68-Ն, ՀՕ-69-Ն, ՀՕ-70-Ն, ՀՕ-71-Ն, ՀՕ-72-Ն, ՀՕ-73-Ն, ՀՕ-74-Ն, ՀՕ-75-Ն, ՀՕ-76-Ն և ՀՕ-77-Ն օրենքների, ինչպես նաև դրանց հետ համակարգային կապի մեջ գտնվող «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի (ՀՕ-246-Ն) 6-րդ և 10-րդ հոդվածների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

2015 թվականի հուլիսի 7-ին հրապարակվեց ՀՀ Սահմանադրական դատարանի ՍԳՈ-1224 որոշումը, համաձայն որի.

- i. «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի՝ սույն գործով վեճի առարկա 2-րդ հոդվածի 1-ին մասի 28, 36 և 37-րդ կետերը, 5-րդ հոդվածի 1-ին մասը, 7-րդ մասը, 9-րդ հոդվածի 10-րդ մասը, 13-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 5-րդ և 13-րդ մասերը, 37-րդ հոդվածի 3-րդ և 5-րդ մասի՝ «օրենքի 43-րդ հոդվածով» դրույթը, 39-րդ հոդվածի 3-րդ մասի երրորդ նախադասությունը, 40-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ պարբերության՝ «որոնց կազմը և առավելագույն չափը սահմանում է Կենտրոնական բանկը» դրույթը, 43-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ պարբերության՝ «ողջամիտ եկամտաբերություն» եզրույթը, 43-րդ հոդվածի 3-րդ մասի՝ «ողջամիտ շահութաբերություն» եզրույթը, 44-րդ հոդվածի 2-րդ մասը, 46-րդ հոդվածի 7-րդ մասի երկրորդ նախադասությունը, 62-րդ հոդվածի 5-րդ մասը, 62-րդ հոդվածի 6-րդ մասի երկրորդ նախադասությունը, 63-րդ հոդվածի 7-րդ մասի երկրորդ նախադասությունը, 67-րդ հոդվածի 3-րդ մասի 6-րդ կետը, 81-րդ հոդվածի 1-ին մասը, 81-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերը, 81-րդ հոդվածի 5-րդ մասը, 81-րդ հոդվածի 7-րդ մասը, 81-րդ հոդվածի 13-րդ մասը համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը՝ հաշվի առնելով սույն որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումները:



- ii.** «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 68-րդ հոդվածի 1-ին սասը ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 83.5-րդ հոդվածի 1-ին կետի պահանջներին հակասող և անվավեր:
- iii.** «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 44-րդ հոդվածի 1-ին սասը, ինչպես նաև 45-րդ հոդվածի 1-ին և 2-րդ սասերը՝ այն սասով, որով տարեկան գնաճով ճշգրտված չափով վերադարձնելու երաշխիքը չի տարածվում նաև տվյալ օրենքի 9-րդ հոդվածով նախատեսված՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից հատկացվող հանապատասխան միջոցների վրա, ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 1-ին, 3-րդ և 48-րդ /կետ 12/ հոդվածների պահանջներին հակասող և անվավեր:
- iv.** «Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը (ՀՕ-68-Ն օրենք), «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը (ՀՕ-69-Ն օրենք), «Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (ՀՕ-246-Ն) 6-րդ և 10-րդ հոդվածները, «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը (ՀՕ-74-Ն օրենք), «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը (ՀՕ-76-Ն օրենք), «Եկամտային հարկի և պարտադիր կուտակային վճարի անձնավորված հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը (ՀՕ-70-Ն օրենք), «Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը

(ՀՕ-71-Ն օրենք), «Մանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը (ՀՕ-72-Ն օրենք), «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը (ՀՕ-73-Ն օրենք), «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը (ՀՕ-77-Ն օրենք), «Կենսաթոշակային համակարգի կուտակային բաղադրիչի մասնակիցների իրավունքների և օրինական շահերի պաշտպանության լրացուցիչ երաշխիքների մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասը համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը՝ հաշվի առնելով սույն որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումները:

Սյապիտով, կարելի է արձանագրել.

- ❑ ՀՀ Սահմանադրական դատարանը վճռեց, որ տարեկան գնաճով ճշգրտված չափով պետք է երաշխիքներ տրամադրել ոչ միայն մասնակցի 5 տոկոսի, այլև պետության կողմից ներդրված 5 տոկոսի համար: Սույն պահանջը առ այսօր չի իրացվել, քանի-որ պետությունը չունի բավարար հնարավորություններ այդքան մեծ երաշխիքներ տրամադրելու համար: Արդյունքում ունենք պարտադիր համակարգ, որը պետության կողմից անբողջությամբ երաշխավորված չէ:



ՄԱՍ 2.

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ԲԱՐԵՓՈՒՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

- i.** 2008 թվականի հոկտեմբեր և դեկտեմբեր ամիսներին, Հանաշխարհային բանկի և Արժույթի միջազգային հիմնադրամի մասնագետների համատեղ աշխատանքի արդյունքում, պատրաստվել է պաշտոնական գրություն «Կայուն զարգացման ծրագրի» վերաբերյալ: Այդ գրությունը բաղկացած է 32 կետից, որոնցից կենսաթոշակային համակարգին են վերաբերում 22-րդ կետի վերջին 2 նախադասությունները, ամբողջությամբ 23-րդ կետը, 30-րդ և 31-րդ կետերի որոշ հատվածները: Ըստ այդ պաշտոնական գրության Հանաշխարհային բանկը և Արժույթի միջազգային հիմնադրամը Հայաստանում կենսաթոշակային համակարգի փոփոխություններին և պարտադիր կուտակային համակարգի անցման վերաբերյալ ունեին վերապահումներ: Այդ երկու միջազգային կազմակերպությունների տեսակետով՝ ՀՀ կառավարության առաջադրած պարտադիր կուտակային կենսաթոշակային համակարգը պետք է վերանայել.
- ❑ անձնական պարտադիր կուտակային կենսաթոշակային գումարներ վարելու համար անհրաժեշտ է ունենալ պետական պարտատոմսերի և արժեթղթերի զարգացած շուկա,
- ❑ հաշվի առնելով 2008 թվականի աշխարհի ֆինանսական շուկայի ճգնաժամը՝ նպատակահարմար չէ այս պահին որդեգրել անհատական, պարտադիր կուտակային կենսաթոշակային համակարգը, քանի որ այն պետք է հիմնված լինի ֆինանսական շուկայի վրա,
- ❑ նոր կենսաթոշակային համակարգը պետական բյուջեի վրա կդառնա ծանր բեռ, ինչի արդյունքում պետական բյուջեի դիֆիցիտը կմեծանա, քանի որ պետությունը ևս 5 տոկոս (առավելագույնը՝ 25 000 ՀՀ դրամ) պետք է հատկացնի մասնավոր կենսաթոշակային ֆոնդերին,

- ❑ համակարգը հավելյալ բեռ է լինելու բյուջեի համար՝ կենսաթոշակայինի համար կատարվող ծախսերը 3 տոկոսից կհասնեն 5,4 տոկոսի՝ 2021 թվականին:

- ❑ 2008 թվականի հոկտեմբերի 13-ին, Արժույթի միջազգային հիմնադրամը (այսուհետ՝ ԱՄՀ) ՀՀ կառավարությանն է ներակայացրել «Հայաստանում կենսաթոշակային բարեփոխումների գծով առաջարկների սափն» ԱՄՀ-ի մեկնաբանությունները: Ըստ որոնց՝ միասնական հարկի (Եկամտային հարկի) հետ կապված ԱՄՀ-ն լուրջ ստահոգություններ ունի: Սկզբունքորեն ԱՄՀ-ն չի առարկում եկամտահարկի և սոցիալական պաշտպանության գծով ծրագրերի ֆինանսավորմանն ուղղված սոցիալական վճարների միասնականացմանը: Այնուամենայնիվ, եկամտահարկը չպետք է միասնականացվի, իսկ կառավարությունը չպետք է մասնակցի կուտակային համակարգի համար կատարվող սոցիալական ապահովագրության վճարների գործընթացին: Ծարունակելով՝ **խնդրահարույց է «5 տոկոս պետության մասնակցության» իրավական պատասխանատվությունը աշխատողներից պետական բյուջեին փոխանցելը**: Սասնավորապես, ստահոգիչ է նաև այն հավանականությունը, որ իշխանություն ստանձնած հաջորդ կառավարությունները (օրինակ՝ Լեհաստանում 2011 թվականին) կարող են վերանայել օրենքը և աշխատողներին չփոխհատուցել իրենց կողմից կատարված վճարները կամ էլ կատարված վճարները աշխատողների անհատական հաշիվներում, որպես ավանդների ձևակերպելիս, ապառքներ կուտակել (ինչը ներկայումս տեղի է ունենում հարկային գերավճարների վերադարձի դեպքում): Ըստ նրանց՝ առավել նպատակահարմար կլիներ, եթե աշխատողները իրենց եկամուտներից 10 տոկոսի չափով ուղղակիորեն կուտակեին իրենց անհատական հաշիվներում (այսինքն՝ սեփական վճարները՝ գումարած 5 տոկոս պետության մասնակցության վճարը)՝ վերացնելով պետական բյուջեի միջնորդական դերը այդ հարցում:

- ii. USAID-ի աջակցությամբ փորձագետ Օդրենտ Մորկունինենն անդրադարձել է «Հայաստանի կենսաթոշակային համակարգի բարեփոխումների» հայեցակարգային փաստաթղթին: Նա գնահատել է բարեփոխումների

հայեցակարգային այդ փաստաթուղթը և առանձնացրել է մի շարք ստահոգություններ և առաջարկություններ, դրանք են.

- ❑ միանման և հավասարաչափ կենսաթոշակ բոլորի համար, ովքեր ունեն առնվազն 10 տարվա ապահովագրական ստաժ, կարող է համարվել ոչ արդարացի այն անձանց համար, ովքեր ունեն ավելի երկար տարիների աշխատանքային ստաժ: Նախորդ համակարգում երկարատև աշխատանքային ստաժը խիստ հարգի էր և այս հիշողությունները դեռևս շատ թարմ են: Լիտվայի փորձը ցույց է տալիս, որ սարդիկ հավանություն են տալիս կենսաթոշակի չափի և ստաժի տարիների միջև կապի ցանկացած դրսևորման: Տնտեսական տեսանկյունից էլ ողջամիտ կլինի սարդկանց պարգևատրել աշխատաշուկայում ավելի երկար ժամանակ մնալու համար: Տնտեսության համար լավ կլինի, որ սարդիկ ավելի երկար ժամանակ աշխատեն և կատարեն ապահովագրական վճարներ, գոնե փոքր գումարներով, սակայն կանոնավոր կերպով, քան թե ժամանակ առ ժամանակ վճարեն մեծ գումարներ և հետագայում պահանջեն կենսաթոշակներ ավելի երկար ժամանակահատվածների համար,
- ❑ «Ապահովագրական վճարներ– կենսաթոշակ» խիստ կապը սովորաբար ավելի նպաստավոր է ավելի մեծ եկամուտներ ստացողների համար, հետևաբար միգրացիոն արժեք դիտարկել կենսաթոշակի այն մասի պահպանման հարցը, որը նման է գոյություն ունեցող աշխատանքային տարիքային կենսաթոշակին: Այդ տարբերակը կարող է նշանակել աշխատանքային կենսաթոշակի ինդեքսավորման փոփոխություն՝ ըստ աշխատավարձի, ինդեքսավորման գնային տարբերակի փոխարեն: Աշխատանքային ստաժի դիմաց որոշ լրացուցիչ կենսաթոշակների տրամադրման շարունակելը կարող է ավելի թանկ արժենալ՝ համեմատած այսօր նախատեսվածի հետ, բայց դա կարող է նաև լավ եղանակ հանդիսանալ բարեփոխումներն ավելի ընդունելի դարձնելու համար,
- ❑ փաստաթղթում ասվում է (բաժին 15.2.2.2), որ ակտիվները կառավարող ընկերությունների թիվը շուկայում կլինի սահմանափակ: Այստեղ հարց է առաջանում՝ ինչու և ինչպես: Ավելի լավ է սահմանել լիցենզավորման բարձր

պահանջներ, քան թե ինչ-որ այլ սահմանափակումներ: Ինչպես Լիտվայում փորձը ցույց է տվել, շուկայում միաձուլումների միջոցով այդ հարցը արդյունավետ կերպով կարող է լուծվել առանց պետության կողմից որևէ մասնակցության: Կարծես թե ՈՍ հենասայան կանավոր խնայողությունների նկատմամբ կիրառվելու է նույն վարչական համակարգը, ինչ ՈՍ հենասայան դեպքում: Այս որոշման հիմնավորումը հստակ չէ: Դա կարող է որոշ չափով խառնել շահերը և վնասել ապահովագրական շուկայի բնականոն զարգացմանը: Փաստաթղթում ասված է (բաժին 11.4.1.2), որ կանավոր ապահովագրական կենսաթոշակ կարող է տրամադրվել միայն լիցենզավորված ընկերությունների կողմից, որոնք որևէ այլ գործունեությամբ զբաղվել չեն կարող լինել: Արդյոք դա նշանակում է, որ կանավոր ապահովագրական կենսաթոշակների նպատակով ստեղծվելու են հատուկ ապահովագրական ընկերություններ և սովորական ապահովագրական ընկերություններին թույլ չի տրվի իրականացնել այդպիսի գործունեություն: Եթե դա այդպես է, ապա համակարգը անտեղի միսկի է դիմում, որովհետև այդպիսի ընկերությունները կարող են շատ փոքր լինել և հաճախորդների փոքր թվի պատճառով բավարար միջոցներով ապահովված չլինել:

- ❑ կենսաթոշակային համակարգի բարեփոխումների նման երկարաժամկետ բարեփոխումների հաջողության համար խիստ կարևոր է, որպեսզի բոլոր առնչվող հաստատությունները ընդհանուր ընթացում ունենան խնդիրների և դրանց լուծելու միջոցների մասին: **Ճնշման տակ ընդունված միջոցառումները երկար կյանք չեն ունենա.** միգուցե մինչև հաջորդ ընտրությունները: Սշխատանքային խմբի բոլոր գործընկերները պետք է պատրաստ լինեն փոխզիջումների գնալ, որպեսզի բարեփոխումները սկսվեն և հետևողականորեն իրականացվեն: Երբ համաձայնություն ձեռք բերվի ընդհանուր ընթացման շուրջ, կառաջանա իրականացնող հաստատության հարցը: Լիտվայի փորձը ցույց է տալիս, որ միայն պետական լիազորություն և քաղաքական պատասխանատվություն ունեցող հաստատությունն է կարող առաջնորդել գործընթացը: Դա պետք է լինի որևէ նախարարություն, որը կունենա օրենսդրական նախագծերի մշակման լիազորություն, դրանք կներկայացնի խորհրդարանին և կարող է վերցնել նաև քաղաքական պատասխանատվություն: Եթե հատուկ նպատակի հանձնաժողովը տար-



բերակ է, այն պետք է ղեկավարվի նախարարի լիազորություն ունեցող քաղաքական գործչի կողմից: **Երկրների մեծ մասում դա կան սոցիալական հարցերի նախարարն է, կան ֆինանսների նախարարը:** Որոշումը մեծապես կախված է նոր համակարգի համար նախատեսված վարչական սխեմայից՝ թե՛ որ նախարարության իրավասությունների ոլորտում պետք է լինի. ֆինանսների, թե՛ սոցիալական հարցերի: Վարչարարության վերահսկման լիազորություն ունենալն էապես նպաստում է ծրագրի իրականացմանը:

Սյապիտով, կարելի է արձանագրել.

- ❑ Միջազգային հեղինակավոր կազմակերպությունների և նրանց ներկայացուցիչների դիրքորոշումները, պարտադիր կուտակային կենսաթոշակային համակարգի վերաբերյալ, հաճախակի և էականորեն փոփոխվել են: Դա նկատելի է նաև Համաշխարհային բանկի դեպքում: Մասնավորապես՝ 1990-ական թվականներին Համաշխարհային բանկի գլխավոր տնտեսագետ Էսթել Զէյնսը պարտադիր կուտակային համակարգի համակիրն էր, սակայն 2000-ական թվականներին գլխավոր տնտեսագետը դարձավ Ռապրոդ Հոլզմանը, ով պայմանական կուտակային համակարգի կողմնակիցն էր: Նրա 2001, 2006 և 2012 թվականների ուսումնասիրությունները պայմանական կուտակային համակարգի վերաբերյալ վկայում են, որ Համաշխարհային բանկը 2000-ական թվականներին սկզբունքորեն փոխել էր իր դիրքորոշումը՝ պարտադիր կուտակայինից դեպի պայմանական կուտակային համակարգ:





ՄԱՍ 3. ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ԲԱՐԵՓՈՒՈՒՄՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁԸ

Միջազգային փորձը փաստում է, որ պարտադիր կուտակային համակարգի անցումը հղի է լուրջ դժվարություններով, որոնց հետևանքով Սրգենտինան և Հունգարիան անբողջությամբ հրաժարվեցին այս համակարգից, իսկ Բոլիվիան և Պերուն այդ ուղղությամբ են ընթանում՝ հիմնականում վերը նշված ֆինանսական շուկաների ռիսկերի պատճառով: Նիկարագուան 2000 թվականին պարտադիր կուտակայինի վերաբերյալ օրենքը ընդունելուց հետո, 2004 թվականին, Համաշխարհային բանկի խորհրդով, որոշեց այն չկիրառել՝ նկատի ունենալով նոր համակարգի անցման հետ կապված մեծ ծախսերը և աշխատողների՝ նոր համակարգին մասնակցության ցածր հավանականությունը:

2008–2011 թվականների ընթացքում, Արևելյան Եվրոպայի բազմաթիվ երկրներ, ինչպիսիք են՝ Լեհաստանը, Սլովակիան, Էստոնիան, Լիտվան և այլն, ևս վերանայել են պարտադիր կուտակային համակարգը, մասնավորապես՝ ժամանակավորապես կասեցրել են պարտադիր վճարները, նվազեցրել դրույքաչափերը և այլն:

2000–ական թվականների սկզբներին ԱՄՆ–ի նախագահ Ջորջ Բուշը փորձեց փոքր չափով պարտադիր կուտակային համակարգ ներդնել սերունդների միջև համերաշխության համակարգին գուգահեռ, սակայն ժողովուրդը դեմ ելավ և փորձը ձախողվեց: Հատկանշական է, որ տարբեր միջազգային փորձագետների գնահատականներով՝ ազատական շուկայական համակարգի ջատագով ԱՄՆ–ում է գործում ամենազորավոր սերունդների համերաշխության կենսաթոշակային համակարգը, ըստ որի՝ ցածր եկանուտ ստացող անձինք հարաբերականորեն ավելի շատ կենսաթոշակ են ստանում, քան բարձր եկանուտ ունեցողները:

2013 թվականին Ռուսաստանը վերադարձավ սերունդների միջև համերաշխության պետական կենսաթոշակային համակարգին՝ ապահովելով նաև միջսերունդային համերաշխությունը, մասնավորապես՝ կենսաթոշակի հաշ-

վարկման հիմքում դրվեցին թոշակի անցման տարիքը, աշխատած տարիների թիվը, աշխատավարձի մեծությունը, վճարումների մի մասը ավանդային հաշիվներ փոխանցելու հնարավորությունը և այլն: Արդյունքում՝ ներդրվեց թոշակի հաշվարկման բալային համակարգ:

ԶԻՎԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

1981 թվականին զինվորական դիկտատոր Օ.Պինոչետի իշխանությունները առաջինն էին, որոնք ներդրեցին պարտադիր կուտակային կենսաթոշակային համակարգը, ըստ որի՝ աշխատողներից պահվող 10 տոկոս կենսաթոշակային վճարումները ամբողջությամբ փոխանցվում են պարտադիր կուտակային անհատական հաշիվների վրա: Եման ծայրահեղ սոսեցում աշխարհում շատ քիչ երկրներ են որդեգրել, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետությունը: Զիլիի Հանրապետությունում 37 տարի արդեն իսկ գործում է պարտադիր կուտակային կենսաթոշակային համակարգը, ինչը թույլ է տալիս գնահատել այս համակարգի արդյունավետությունը:

2016 թվականի Զիլիի ողջ տարածքով սկիզբ առան բազմամարդ ցույցեր, որոնց մասնակցում էին հարյուր հազարավոր քաղաքացիներ: Նրանք ունեին միայն մեկ պահանջ՝ չեղարկել պարտադիր կուտակային կենսաթոշակային համակարգը: Սճող դժգոհությունների պատճառով՝ ցածր կենսաթոշակն էր: Ներկայումս չիլիացի թոշակառուների 80 տոկոսը ստանում է նվազագույն աշխատավարձից պակաս կենսաթոշակ, իսկ թոշակառուների 44 տոկոսը ստանում է աղքատության շեմից էլ ցածր թոշակ: Պարտադիր կուտակային կենսաթոշակային համակարգի գործունեության արդյունքում բազմաթիվ չիլիացի տարեցներ ի վիճակի չեն անցնել վաստակած հանգստի, քանի որ վերջիններիս թոշակը բավարար չի արժանավայել կյանքի ապահովման համար, և պարտադրված շարունակում են աշխատել նաև կենսաթոշակային տարիքից հետո: Այն դեպքում, երբ համակարգի հեղինակների հաշվարկների համաձայն՝ պարտադիր կուտակային կենսաթոշակային համակարգի մասնակցի կենսաթոշակի մեծությունը պետք է լիներ իր վերջին ամսական աշխատավարձի 70 տոկոսից ոչ պակաս: Վատթարագույն վիճակում են հայտնվել կանայք, ովքեր, երեխաների խնամքի տարիներին ոչինչ չկուտակելով և հետագայում զբաղվածության ապահովման խնդիր ունենալով, անհամեմատ ցածր կուտակային



կենսաթոշակ են ստանում: Իրավիճակը չփրկեց նաև 2008 թվականին Չիլիի կառավարության կողմից յուրաքանչյուր երեխայի համար նախատեսված կուտակային գումարների հատկացումը:

Հաշվի առնելով աճող ժողովրդական ընդվզումը՝ Չիլիի նախագահ Սիշել Բաչելետը ստեղծել է հանձնաժողով, որը ղեկավարում է տնտեսագետ Դեվիթ Բրավոն, ում առջև դրվել է խնդիր՝ ներկայացնել հավասարակշռված և տրամաբանական նոր կենսաթոշակային համակարգ:

2017 թվականին խորհրդարանի քննարկմանը ներկայացվեց կենսաթոշակային բարեփոխումների փաթեթ, համաձայն որի՝ առաջարկվում էր բացի աշխատողների 10 տոկոսից գործատուները ևս 5 տոկոս պետք է վճարեն, որից 3 տոկոսը կողդվի անհատական կուտակային հաշվիներ, իսկ 2 տոկոսը՝ կոլեկտիվ խնայողությունների հիմնադրամ: Սյսինքն՝ պարտադիր կուտակայինին կից գործելու էր նաև սերունդների համերաշխության կենսաթոշակային համակարգը: Հիմնադրամի ստեղծման համար անհրաժեշտ էր խորհրդարանի պատգամավորների ոչ պակաս 4/7 ձայների աջակցությունը, որը բացակայում էր: Կենսաթոշակային բարեփոխումների ուղղությամբ աշխատանքները շարունակվում են. քննարկումները առավել սաստկանում են նախընտրական շրջանում:

Չիլիի պարտադիր կուտակային կենսաթոշակային համակարգի հեղինակությանը մեծ հարված հասցրեցին ակտիվների կառավարիչները՝ սահմանելով և գանձելով բարձր՝ 4-6 տոկոսի չափով, պարզևավճարներ և անօրինական գործարքների մեջ մտնելով իշխանության տարբեր ներկայացուցիչների հետ:

Վերջին շրջանում Լատինական Ամերիկայի երկրներից Պերուի կառավարությունը ևս որոշել է կազմավորել հանձնաժողով, որը կուսումնասիրի և կառաջադրի պարտադիր կուտակային կենսաթոշակային բարեփոխումների փաթեթ:

ԴԱՆԻԱՅԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

1998 թվականին Դանիայում ներդրվեց անհատական պարտադիր կուտակային կենսաթոշակային համակարգը՝ սերունդների միջև համերաշխության

համակարգին զուգահեռ: Ընդհանուր եկամտի 1 տոկոսի չափով պարտադիր կուտակային վճարներ պարտավոր էին կատարել 16-64 տարեկան աշխատողները, ըստ էության՝ բոլորը զբաղվածները: 2004 թվականից պարտադիր կուտակային վճարները կասեցվել են և 2010 թվականին ապրիլի 30-ին պարտադիր կուտակային համակարգը իրավականորեն դադարել է գոյություն ունենալ, իսկ ֆոնդերում կուտակված գումարները բաժանվել են: 2007 թվականին Դանիայում ներդրվել է «Վաղաժամ» կենսաթոշակային համակարգ (anticipatory pensions), որը ապահովում է ոչ միայն սերունդների միջև, այլև միջ-սերնդային համերաշխությունը, քանի որ թոշակը հաշվարկվում է կենսաթոշակառուի ամուսնական կարգավիճակից, ստացած աշխատավարձից և թոշակի անցման տարիքից ելնելով:

ՀՈՒՆԳԱՐԻԱ

1997 թվականին Հանգարիայում ընդունվել էր անհատական կուտակային համակարգը, որին պարտադիր մասնակցում էին այն անձիք, ովքեր օգտվում են սոցիալական ապահովագրությունից, ովքեր ապահովագրված են 1998 թվականին հունիսի 30-ից հետո: Կամավոր կարող էին մասնակցել այն անձիք, ովքեր ապահովագրված էին մինչև 1998 թվականի հունիսի 30-ը, կամ նրանց տարիքը 42-ից բարձր էր: Բազային ապահովագրության և պարտադիր կուտակային վճարները միասին կազմում էին 9,5 տոկոս, որից 1,5 տոկոս ուղղվում էր բազային ապահովագրությանը, 8 տոկոսը՝ անհատական կուտակային հաշիվներին: Պահումները արվում էին ամսական 71500 ֆորինտից (322 ԱՄՆ դոլար) բարձր եկամուտ ունեցող անձանցից:

Ապահովագրված անձը, ով ուներ կուտակված գումարներ, ստանում էր բազային կենսաթոշակի 75 տոկոսը, իսկ բազային կենսաթոշակը հաշվարկվում էր միջին աշխատավարձից և աշխատած տարիների թվից ելնելով: Սիջին աշխատավարձը ինդեքսավորվում էր 1988 թվականից սկսած:

2008-2009 թվականների ֆինանսատնտեսական ճգնաժամի հետևանքով պետությունը թոշակների վճարման մեծ խնդրի առջև կանգնեց, ինչպես նաև մասնավոր կենսաթոշակային ֆոնդերի ակտիվների արժեքը կտրուկ նվազեց, ինչը պարտադրեց իշխանություններին մշակել և կյանքի կոչել նոր կենսաթո-



շակային բարեփոխումներ: 2010 թվականին, կենսաթոշակային բարեփոխումների արդյունքում, Հունգարիայում դադարեց գործել պարտադիր կուտակային համակարգը և վերադարձ եղավ սերունդերի համերաշխության կենսաթոշակային համակարգին: 2009 թվականից սկսած մասնակցությունը կուտակային համակարգին դարձավ կանավոր: Մասնավոր ֆոնդերում կուտակված գումարները փոխանցվեցին պետական բյուջե: Ֆոնդերի ակտիվների գրեթե կեսը ներդրված էր պետական պարտատոմսերում, որոնք չեղյալ հայտարարվեցին:

ԼԵՀԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

1999թ. կենսաթոշակային բարեփոխումների արդյունքում Լեհաստանում ներդրվեց 3 սյունների վրա հիմնված կենսաթոշակային համակարգ.

1-ին սյունը պետական սոցիալական ապահովագրությունն էր, որի համար աշխատողները իրենց աշխատավարձի 12.22 տոկոսն էին վճարում:

2-րդ սյունը անհատական պարտադիր կուտակային համակարգն էր, որի համար աշխատողները իրենց աշխատավարձի 7.3 տոկոսն էին վճարում:

3-րդ սյունը անհատական կանավոր կուտակային համակարգն էր, որի համար յուրաքանչյուր աշխատող իր հայեցողությամբ վճարումներ է կատարում:

Պարտադիր կուտակային համակարգը տարածվում էր 1968 թ. դեկտեմբերի 31-ից հետո ծնվածների վրա: Եվազագույն աշխատավարձից պահումներ չէին արվում: Պահումներ չէր արվում նաև միջին աշխատավարձի 30-ապատիկից ավել աշխատավարձից: Միջին աշխատավարձը 2012 թ. կազմել է 3416 գլոտի կամ 1093 ԱՄՆ դոլար:

2008-2009 թվականների ֆինանսատնտեսական ճգնաժամը մեծ դժվարությունների առջև կանգնեցրեց Լեհաստանի կառավարությանը. բյուջեի դիֆիցիտը աճում էր, հետևաբար աճում էր նաև պետական պարտքը: 2011 թվականին, հրատապ կերպով, Լեհաստանի կառավարությունը կենսաթոշակային համակարգում մի շարք կտրուկ փոփոխություններ իրականացրեց, մասնա-

վորապես՝ տղամարդկանց դեպքում՝ 65 տարեկան, կանանց դեպքում՝ 60 տարեկան, կենսաթոշակային տարիքը բարձրացվեց երկու սեռի դեպքում էլ 67-ի: Հաջորդ փոփոխությանը պարտադիր կուտակային վճարները նվազեցվեց 5 տոկոսով՝ փոխարենը ավելացնելով պետական սոցիալական ապահովագրության համակարգին ուղղվող վճարումները, արդյունքում՝ 1-ին սյան վճարումները դարձան 17,22 տոկոս, իսկ 2-րդ սյանը՝ 2,3 տոկոս (պարտադիր կուտակային): 2017 թվականին պարտադիր կուտակային վճարները բարձրացվեցին 3.5 տոկոսի: Սյախտով՝ Լեհաստանը ևս մասնակիորեն վերանայեց պարտադիր կուտակային համակարգը:

ՍԼՈՎԱԿԻԱՅԻ ՀՍԵՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

2004 թ. Սլովակիայի Հանրապետությունում ընդունվել է Մնհատական կուտակային օրենքը, որը ուժի մեջ է մտել 2005 թ.: Մնհատական կուտակային համակարգին պարտադիր մասնակցում էին 2005 թվականի հունվարի 1-ից հետո աշխատանքի շուկա նոր մտնող անձիք: Սյն անձիք, ովքեր մինչև 2005 թվականի հունվարի 1-ն էին աշխատանքի շուկա մտնել, մինչև 2006 թվականի հունիսի 30-ը կարող էին կամավոր ընդգրկվել: Սերունդների համերաշխության պետական համակարգը զուգահեռ շարունակել է գործել:

Սերունդների համերաշխության պետական համակարգի համար յուրաքանչյուր աշխատող վճարում է իր եկամտից 14 տոկոս, իսկ պարտադիր կուտակայինի համար՝ 9 տոկոս:

Վճարումներ պարտավոր են անել այն աշխատողները և ինքնազբաղվածները, ովքեր 12 ամսվա կտրվածքով յուրաքանչյուր ամիս 339.8 եվրոյից ավել եկամուտ են վաստակում: Պահումներ չի արվում ամսական 3076 եվրոյից ավել եկամտից:

2009 թ. հնարավորություն տրվեց պարտադիր կուտակային համակարգ կամավոր անցում կատարած աշխատողներին վերադառնալ համերաշխության պետական համակարգին, ինչպես նաև 2009-2012 թվականներին աշխատանքային շուկա նոր մտնող աշխատողներին՝ պարտադիր կուտակային համակարգին մասնակցել կամավոր:



ԼԻՏՎԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

2004 թվականից Լիտվայում սկսել է գործել նոր կուտակային համակարգը, որից կարող են օգտվել բոլոր զբաղվածները, արդյունքում՝ կենսաթոշակային համակարգը ներկայումս ունի հետևյալ տեսքը.

- ❑ Պետական սոցիալական ապահովագրության համակարգ՝ «Սոդրա» (սե-րունդների համերաշխության համակարգ) – բազային թոշակ,
- ❑ Պետական սոցիալական ապահովագրության հաշվին կուտակումներ կեն-սաթոշակային ֆոնդերում – կուտակային թոշակ,
- ❑ Կենսաթոշակի լրացուցիչ խնայողություն պետական սոցիալական ապա-հովագրության կամ կուտակային ֆոնդերի ուղղությամբ – լրացուցիչ թոշակ:

Բազային թոշակը կազմում է 360 լիտաս (104.4 եվրո):

Կուտակային համակարգին մասնակցությունը կանավոր է, կենսաթոշա-կային ֆոնդ չընտրելու դեպքում՝ այդ գումարը մնում է պետական կենսաթո-շակային համակարգում:

Յուրաքանչյուր աշխատողի հաշվով անսական սոցիալական ապահովագ-րության համար վճարվում է աշխատավարձի 33,98 տոկոսը, որից 3 տոկոսը աշխատողն է վճարում, իսկ մնացած 30,98 տոկոսը՝ գործատուն:

Նվազագույն անսական աշխատավարձը կազմում է 1000 լիտաս (289 եվրո), որից պահում չի արվում:

2004–2008 թվականներին Լիտվայում բարենպաստ միջավայր էր կուտա-կային համակարգի զարգացման համար, սակայն 2008 թվականից, երբ սկսեց ֆինանսատնտեսական ճգնաժամը, արժեթղթերի գների անկում գրանցվեց, ինչի արդյունքում նվազեցին կենսաթոշակային ֆոնդերում կուտակումները:

Սոցիալական ապահովագրության վճարների որոշը մասը գնում է կուտակային համակարգին: 2004 թ.-ից մինչև 2007 թ. սոցիալական ապահովագրության վճարներից կուտակային մասնաբաժինը 2,5 տոկոսից աստիճանաբար բարձրացավ 5,5 տոկոսի: 2009 թ. կուտակումները նվազեցին 3 տոկոսի, այնուհետև՝ 2 տոկոսի: 2012 թվականին կրկին նվազեցին մինչև 1,5 տոկոսի: 2013 թ. բարձրացվեց 2 տոկոսի:

2016 թվականի հունվարի 1-ից կենսաթոշակային ֆոնդերում կուտակումները կազմում են՝

- ❑ 2 տոկոս սոցիալական ապահովագրության վճարների մասնաբաժնից,
- ❑ 2 տոկոս կուտակողի աշխատավարձից,
- ❑ 2 տոկոս պետական բյուջեից (նախանցած տարվա միջին աշխատավարձի չափով):

Աղյուսակ 1. Լիտվայի կուտակային կենսաթոշակային համակարգի կառուցվածքը և դինամիկան

	Մինչև 2004	2004	2005	2006	2007-2008	2009.01-2009.06	2009.07-2009.12	2010-2011	2012	2013	2014-2015	2016-2019	2020 հիմա
Սոց.ապահով. վճարները (%)	34	31.5	30.5	29.5	28.5	37	38	38	38.5	37.5	38	38	36.5
Սոց.ապահով. վճարներից կենս. ֆոնդին (%)	-	2.5	3.5	4.5	5.5	3	2	2	1.5	2.5	2	2	3.5
Աշխատավարձից կենս. ֆոնդին (%)	-	-	-	-	-	-	-	-	-	-	1	2	2
Պետ.բյուջեից (%)	-	-	-	-	-	-	-	-	-	-	1	2	2

Սյսպիսով՝ Լիտվայի կուտակային կենսաթոշակային համակարգի առավելությունը այն է, որ այն աշխատողին ընտրության հնարավորություն է տալիս՝



մտնել կուտակային համակարգ, թե՛ ոչ: Կուտակային ֆոնդերին գումարներ են հատկացվում արդեն իսկ վճարած սոցիալական ապահովագրության վճարներից, իսկ աշխատողը ընդամենը լրացուցիչ վճարում է 1 տոկոս: Կուտակային համակարգ մտնելու դեպքում պետությունը իր հերթին վճարումներ է կատարում՝ խրախուսելով համակարգի կայացմանը:

ԼԱՏՎԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

2001 թվականի հունիսի 1-ից Լատվիայում գործում է 3 մակարդակի կենսաթոշակային համակարգ, դրանք են՝

- ❑ Պետական կենսաթոշակային համակարգ (սերունդների համերաշխության),
- ❑ Պարտադիր կուտակային համակարգ,
- ❑ Կանավոր կենսաթոշակային ապահովագրություն:

Պարտադիր կուտակային համակարգը տարածվում է 1971 թվականի հունիս 1-ից հետո ծնվածների վրա: Սյն անձիք, ովքեր ծնվել են 1951 թվականի հունիսի 2-ից 1971 թվականի հունիսի 1-ը ընկած ժամանակահատվածում, կարող են կանավոր միանալ կուտակային համակարգին:

Պարտադիր կուտակային համակարգից օգտվելու համար պետք է լրացուցիչ վճարներ կատարել:

Յուրաքանչյուր աշխատողի հաշվով, անսական սոցիալական ապահովագրության համար, վճարվում է աշխատավարձի 34,09 տոկոս, որից 10,5 տոկոսը աշխատողն է վճարում, իսկ մնացած 24,09 տոկոսը՝ գործատուն: Սոցիալական ապահովագրության վճարներից՝ 34,09 տոկոսից, 20 տոկոսը բաշխվում է պետական կենսաթոշակային և պարտադիր կուտակային համակարգերի միջև:

Աղյուսակ 2. Լատվիայի կուտակային կենսաթոշակային համակարգի կառուցվածքը և դինամիկան

Տարիներ	Պետական կենսաթոշակային համակարգ (1-ին մակարդակ)	Պարտադիր կուտակային համակարգ (2-րդ մակարդակ)
2001-2006	18 %	2 %
2007	16 %	4 %
2008	12 %	8 %
2009-2012	16 %	2 %
2013-2014	18 %	4 %
2015	15 %	5 %
2016	14 %	6 %

Ինչպես արդեն նշել ենք պարտադիր կուտակային համակարգից օգտվելու համար լրացուցիչ վճար չի արվում, այդ գումարը ընդգրված է ընդհանուր պահումների մեջ: Պարտադիր կուտակային վճարի մասնաբաժինը, կապված երկրի ֆինանսատնտեսական վիճակի հետ, անընդհատ փոփոխվել է, մասնավորապես՝ 2008 թվականին պարտադիր կուտակային վճարը 8 տոկոսից կտրուկ իջեցվել է 2 տոկոսի: Վերջին տարիներին մասնակիորեն բարձրացվել է, սակայն դեռևս չի հասել նախաճգնաժամային 8 տոկոսին: Ճգնաժամային տարիներին՝ 2009-2012, պետական բյուջեի դիֆիցիտի նվազեցնելուն էր ուղղված պետական կենսաթոշակային համակարգի մասնաբաժնի ավելացումը՝ ի հաշիվ պարտադիր կուտակայինի:

2014 թվականին Լատվիայում սահմանվել են նվազագույն և առավելագույն պահումների շեմեր.

- ☒ Առավելագույն շեմը – 46400 եվրո տարեկան,
- ☒ Նվազագույն շեմը – 3840 եվրո տարեկան (12ամիս*320եվրո):

Ներկայումս կենսաթոշակային տարիքը 62 տարեկանն է, սակայն 2014 թվականից, ամեն տարի, կենսաթոշակային տարիքը 3 ամսով բարձրացվելու է մինչև 65 տարեկանի հասցնելը:

ԷՍՏՈՆԻԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Էստոնիայում կենսաթոշակային համակարգը հիմնված է 3 սյունների վրա, որանք են՝

- i.** Պետական թոշակ,
- ii.** Կուտակային թոշակ (պարտադիր),
- iii.** Լրացուցիչ կուտակային թոշակ (կամավոր):

Պետական կենսաթոշակը իր հերթին բաղկացած է՝ հիմնական մասից (բազային թոշակ), աշխատած տարիների մասից և վճարած սոցիալական ապահովագրության հարկերի մեծությամբ պայմանավորված մասից:

Մինչև պարտադիր կուտակային համակարգի ներդրումը 1998 թվականից Էստոնիայում գործել է կամավոր կուտակային համակարգը, ինչը թույլ է տվել համակարգի արդյունավետությունը և թերությունները ստուգել պրակտիկայից ելնելով:

2002 թվականի մայիսի 1-ից Էստոնիայում սկսել է գործել պարտադիր կուտակային կենսաթոշակային համակարգը, որը տարածվում է 1982 թվականի դեկտեմբերի 31-ից հետո ծնվածների վրա, այսինքն՝ 18 տարին լրացած այն անձանց վրա, ովքեր նոր էին աշխատաշուկա մտնում:

01.05.2002–31.10.2010 ժամանակահատվածում պարտադիր կուտակային համակարգին կամավոր կարող էին միանալ այն անձինք, ովքեր ծնվել են 1942–1982 թվականների ընթացքում:

Գործատուն յուրաքանչյուր աշխատողի հաշվով անսակն աշխատավարձի 20 տոկոսի չափով սոցիալական հարկ է վճարում:

Պարտադիր կուտակային համակարգը, երկրի սոցիալ-տնտեսական իրավիճակով պայմանավորված, փոփոխության է ենթարկվել, մասնավորապես՝

- ❑ 01.05.2002–31.05.2009 թվականների ընթացքում՝ աշխատողը իր բրուտո-աշխատավարձի 2 տոկոսն է կուտակել, գործատուի վճարած սոցիալական հարկի հաշվին պետությունը, իր հերթին, ավելացրել է 4 տոկոս,
- ❑ 01.06.2009–31.10.2010 թվականների ընթացքում պետությունը կուտակման համար բյուջեից հատկացում չի արել, պարտադիր կուտակային վճարումները ամբողջությամբ ուղղվել են սերունդների համերաշխության կենսաթոշակային համակարգին (պետական թոշակին),
- ❑ 01.01.2011–31.12.2012 թվականների ընթացքում՝ աշխատողը իր բրուտո-աշխատավարձի 1 տոկոսն է կուտակել: Գործատուի վճարած սոցիալական հարկի հաշվին պետությունը իր հերթին ավելացրել է 2 տոկոս,
- ❑ 2013թվականի հունվարի 1-ից սկսած վերադարձ է եղել պարտադիր կուտակայինի վճարների սկզբնական տարբերակին, այսինքն՝ աշխատողը իր բրուտո-աշխատավարձի 2 տոկոսն է կուտակել: Գործատուի վճարած սոցիալական հարկի հաշվին պետությունը, իր հերթին, ավելացրել է 4 տոկոս:

2013 թվականից պետությունը յուրաքանչյուր երեխայի հաշվով 1 տոկոս կուտակում է խնամող ծնողի համար:

ՈՌԻՍԱՍՏԱՆԻ ԳՍԸՆՈՒԹՅՈՒՆ

2013 թվականի նոյեմբերին Ռուսաստանում 6 մասնավոր կենսաթոշակային ֆոնդեր գրկվել են լիցենզիայից, արդյունքնում՝ 19 000 քաղաքացիներ կորցրել են շուրջ 470 մլն ռուբլի իրենց կուտակած գումարները: Այդ մասնավոր կենսաթոշակային ֆոնդերը չէին ստնում 50 խոշորագույն ֆոնդերի մեջ, սակայն տարօրինակն այն է, որ այդ ֆոնդերը ընդհանրապես չունեին ներդրումային եկամուտներ, ինչը հակասում է «կուտակային» համակարգի հայեցակարգային սկզբունքին, այսինքն՝ կուտակած գումարները ընդհանրապես եկամուտ չէին բերել: Մասնկացած մասնավոր կենսաթոշակային ֆոնդերից համեմատաբար խոշոր էին՝ НПФ «Промрегион» (ավելի քան 200 մլն. ռուբլի կուտակումներով), НПФ «Профессиональный независимый»–НПФ «Трансстрой» (123 մլն. ռուբլի եր-



կուսի համար): Ավելի վաղ՝ 2003 թվականի օգոստոսին, սնանկ է ճանաչվել «Стимул-фонд» մասնավոր կենսաթոշակային ֆոնդը, որը այդ տարիներին համարվում էր 50 խոշոր ֆոնդերից մեկը, ուներ 24 000 կենսաթոշակային պայմանագրեր և 32 000 մասնակիցներ: Ֆոնդի ակտիվների կառավարմամբ էր զբաղվում Кызбасспромбанк-ը, որը 1998 թվականին Ռուսաստանի տնտեսական ճգնաժամի հետևանքով սնանկացել էր և վճարեց կուտակած գումարների մի մասը: 2000-ական թվականներին Տվերի շրջանում հիմնադրված «Содружество» մասնավոր կենսաթոշակային ֆոնդի նկատմամբ քրեական գործ հարուցվեց 2010 թվականին, քանի որ 450 կուտակային կենսաթոշակային համակարգի մասնակիցներ, հասնելով կենսաթոշակային տարիքի, չստացան իրենց կուտակած գումարները: Գործի քննության ընթացքում պարզվեց, որ «Содружество» մասնավոր կենսաթոշակային ֆոնդը 105 մլն. ռուբլի գումար է փոշիացրել, ինչի արդյունքում՝ հարյուրավոր խաբված մարդիկ չեն կարողանում վերադարձնել իրենց կուտակած գումարները:

2009 թվականի դեկտեմբեր ամսին կենսաթոշակային միջոցների ևս մեկ կառավարիչ սնանկացավ: Խոշոր և հայտնի «РБизнеси» ակտիվների կառավարիչ ընկերությունն (նախկին՝ УК Росбанка) ինքնակամ սկսել էր սնանկացման գործընթացը, քանի որ մասնավոր կենսաթոշակային ֆոնդերն ընկերությունից պահանջում էին 2008 թվականի ընթացքում առաջացած վնասների փոխհատուցումը: Ընկերության դեմ հայց էին ներկայացրել խոշոր մասնավոր կենսաթոշակային ֆոնդերը, դրանք էին՝ «Благосостояние», «Транснефть» և «Норильский никель»: Հայցագրի ընդհանուր արժեքը կազմում էր 1.34 մլրդ ռուբլի:

Այսպիսով, կարելի է արձանագրել՝

- ❑ Աշխարհում չկա և չէր էլ կարող լինել որևէ մեկ ընդհանուր ունիվերսալ բանաձև կենսաթոշակային համակարգի կազմակերպման համար, քանի որ բազմազործոն այս համակարգի կենսունակությունը էապես կախված է սոցիալ-տնտեսական երկարաժամկետ զարգացման ներազգային առանձնահատկություններից, որոնք հատկապես ընդգծվում են զարգացող փոքր տնտեսություններում

- ❑ Տարբեր երկրներ պատմական տարբեր փուլերում գնացել են տարբեր ճանապարհներով:
- ❑ Պարտադիր կուտակային կենսաթոշակային համակարգը մի շարք երկրներում ապրել է ճգնաժամ և նույնիսկ չեղարկվել: Այն չի ապահովել այն արդյունքները, որոնք ակնկալվել են:
- ❑ Կուտակային համակարգի չեղարկման օրինակները վկայում են, որ այն փոխելու խնդիրը բացառապես պայմանավորված է երկրի իշխանությունների և ժողովրդի ցանկությամբ:
- ❑ Կենսաթոշակային ֆոնդերի սնանկացման վտանգը դեռևս մնում է շատ բարձր՝ հաշվի առնելով պարբերաբար կրկնվող ֆինանսատնտեսական ճգնաժամերը և անբարեխիղճ տնտեսվարումը:



ՄԱՍ 4.

ԿՈՒՏԱԿԱՅԻՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ, ՈՒՍԿԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ներկայումս իրականացվող կենսաթոշակային բարեփոխումների կողմնակիցները, ի պաշտպանություն իրենց ծրագրի, տարբեր տարիներին բերել էին և ներկայումս բերում են հետևյալ հիմնավորումները⁸.

- ❑ Հին համակարգը չի ապահովում սոցիալական արդարության սկզբունքը, չի խրախուսում քաղաքացուն ցույց տալ եկամուտները, իսկ աշխատավարձի և ապագայում ստացվող թոշակի միջև բացակայում է համապատասխան կապը: Նոր համակարգը կդրդի քաղաքացիներին ցույց տալ եկամուտները և դուրս գալ սովերից:
- ❑ Հայաստանը ունի ժողովրդագրական խնդիրներ: «Ծերացող հասարակությունը», կյանքի տևողության աճը նոր բեռ են դառնում պետական բյուջեի և հին համակարգի համար: Աշխատող/թոշակառու 1/1 հարաբերակցությունը վտանգում է ֆինանսական կայունությունը և բացառում է արժանապատիվ թոշակի տրամադրումը:
- ❑ Հասարակությունը սովոր չէ մտածել իր ապագայի մասին և կուտակել միջոցներ ծերության համար: Պետությունը պետք է սովորեցնի քաղաքացիներին մտածել իր ծերության մասին և օգնել կուտակել և ավելացնել սեփական միջոցները:
- ❑ Կուտակային հիմնադրամների միջոցով համակարգի գործադրումը կթեթևացնի պետական բեռը, կապահովի երկարաժամկետ փողեր, գումարները կներդրվեն Հայաստանի տնտեսությունում, իսկ այն մասը, որը կուղղվի դուրս, կտեղաբաշխվի, օրինակ, Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության երկրներում:

8 Ստորև հավաքել ենք բոլոր հիմնավորումները, որոնք ընդգրկված են եղել հայեցակարգային փաստաթղթերում, բարձրաձայնվել են կողմնակիցների կողմից, ներկայացվել են խորհրդարանին:

- ❑ Քաղաքացիները ի տարբերություն հին համակարգի կոնենսան սեփականության իրավունք անսական հինգ տոկոսով կուտակված միջոցների նկատմամբ, իսկ նրանց խրախուսելու համար պետությունը կավելացնի նրանց հաշիվներին ևս հինգ տոկոս:
- ❑ Ֆոնդերի կառավարումը կիրականացնեն արտասահմանյան հեղինակավոր կառավարիչները, ինչը միջոցների արդյունավետ կառավարման երաշխիք է:
- ❑ Համակարգը անցել է անվերադարձելիության կետը և ֆոնդերի կառավարիչների գործունեության դադարեցումը կվճասի երկրին, իսկ համակարգի դադարեցումը ավելի ծանր բեռ կլինի պետության համար:
- ❑ Գումարները ներդրված են Հայաստանի տնտեսությունում և նպաստում են երկրի զարգացմանը:
- ❑ Կուտակային համակարգի գործադրման համար անհրաժեշտ է հանրային վստահություն Կառավարության նկատմամբ, ինչն այսօր առկա է:

Ստորև ներկայացնենք կուտակային կենսաթոշակային համակարգի բազմաթիվ խնդիրները, այդ թվում նաև անդրադառնալով համակարգի կողմնակիցների ներկայացրած փաստարկներին:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՐԴԱՐՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐԸ

Մնշուշտ **միակ և միանշանակ ընդունման ենթակա փաստարկը վերաբերում է հին համակարգի անարդար լինելու հանգամանքին:** Մնկախ քաղաքացու՝ տարիների ընթացքում ստացված աշխատավարձից, վճարված հարկերից կամ կենսաթոշակային վճարներից, նրա թոշակը պայմանավորված էր բացառապես աշխատանքային ստաժով՝ առանց մասհանումները հաշվի առնելու:

Կենսաթոշակային բարեփոխումների համակարգի ինչ նոդել էլ ընտրվի, այն պետք է ապահովի արդարության սկզբունքը: **Սակայն կուտակային համակարգը միակը չէ, որը կարող է ապահովել սոցիալական արդարություն: Գոյություն ունեն նաև այլ մեխանիզմներ, որոնք ապահովում**



են կապը կյանքի ընթացքում վճարված նասահանումների և ծերության կենսաթոշակի միջև: Առավել մանրամասն առաջարկվող հնարավոր տարբերակի մասին կներկայացվի սույն հետազոտության Մաս 5-ում:

Կողմնակիցների հաջորդ փաստարկները թեև տեղին են, սակայն որևէ կապ չունեն կենսաթոշակային համակարգի հետ և դրանց լուծումը գտնվում է կենսաթոշակային տիրույթից դուրս:

Այսպես, Հայաստանում առկա է սովերային զբաղվածություն, հազարավոր քաղաքացիներ զբաղված են ձեռներցությամբ կամ հանդիսանում են վարձու աշխատող, վաստակում են եկամուտ, սակայն պատշաճ գրանցված չեն և չեն վճարում իրենց հասանելիքը պետական բյուջեին: Բազմաթիվ են դեպքերը, երբ նույնիսկ գրանցված լինելու պարագայում ձևակերպված է իրականից ավելի ցածր եկամուտ՝ պետության առջև պարտավորությունները նվազեցնելու նպատակով: Հանրապետությունում կայուն մեծ թիվ են կազմում նաև աշխատող աղքատները:

Կուտակային համակարգը որևէ կերպ չի կարող լուծել (և չլուծեց) սովերից դուրս գալու խնդիրը, ինչը ակնկալում էին նոր համակարգի կողմնակիցները: Ավելին՝ այս տարիների փորձը վկայեց, որ սա որևէ ազդեցություն չունի քաղաքացու կամ գործատուի վարքագծի փոփոխության վրա: Սրա պատճառները բազմաթիվ են.

- ❑ Ներկայումս հավելյալ ստացվող եկամուտը ավելի կարևոր է, քան տասնամյակներ հետո ակնկալվող անհայտ չափի թոշակը,
- ❑ Աշխատաշուկայի ծանր վիճակը, անկախացումից հետո խրոնիկ բարձր գործազրկությունը, վարձատրության ցածր մակարդակը, աշխատողների շահերի պաշտպանության համակարգի բացակայությունը նպաստում են աշխատողների հարմարվողականությանը առկա վիճակին:
- ❑ Սովերային դաշտում աշխատում են ոչ պատշաճ պետական ու ոչ պետական վերահսկողության պայմաններում, արհմիությունների հիմնականում

բացակայող դերի պատճառով, այլ ոչ թե խրախուսման մեխանիզմների բացակայության պատճառով:

Ավելին՝ նոր համակարգն այսօր պարունակում է անարդարության էական տարր, երբ ողջ հասարակության, այդ թվում նրանց, ովքեր ծնվել են 1974 թվականից առաջ, բյուջե վճարած հարկերը ուղղվում են համակարգում ներգրավված հասարակության մի փոքր հատվածի հաշիվների համալրմանը: Այսինքն, մի փոքր հատվածի համար հավելյալ 5 (կամ առաջարկվող 7,5) տոկոսը տրվում է բոլորի վճարած հարկերից:

ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ԽՆԴԻՐԸ

Հայաստանի կարևորագույն մարտահրավերներից է ժողովրդագրական խնդրի լուծումը: Սույն խնդիրը բարձրաձայնելով, նոր համակարգի կողմնակիցները ոչ միայն չեն նշում դրա իրական պատճառներն ու ակունքները, այլ նաև չեն բացահայտում այն հանգամանքը, որ նոր համակարգը էլ ավելի է ծանրացնելու ժողովրդագրական վիճակը:

Հայաստանի ժողովրդագրական իրավիճակի վատթարացումը պայմանավորված է մի շարք գործոններով, իսկ ժողովրդագրական իրավիճակի բարելավումը օբյեկտիվորեն հնարավոր է միայն պետական երկարաժամկետ ու համալիր ծրագրի հետևողական ու թիրախավորված իրականացման արդյունքում՝

- ❑ Տնտեսական դաշտի մենաշնորհացում և ազատ ձեռներեցության փաստացի սահմանափակում,
- ❑ Աշխատատեղերի, արժանապատիվ վարձատրության բացակայության, տարածքային անհամաչափ զարգացման, կյանքի որակի ցածր մակարդակի հիմնական պատճառներով աշխատանքային ներքին և արտաքին արտագաղթ,
- ❑ Արտագաղթում են հիմնականում աշխատունակ տարիքի մարդիկ, որոնք լրացնում են այլ երկրների բյուջեն, սակայն Հայաստանում մնացած տարեցներին վճարում է ՀՀ պետական բյուջեն,



- ❑ Վերջին տաս տարվա ընթացքում Կառավարության և Կենտրոնական բանկի կողմից բնակչության ցածր եկամտի քաղաքականության իրականացում,
- ❑ Ծնելիության ցուցանիշի անկում (1990 թվականին Հայաստանում ծնվում էր 80 հազար երեխա, այժմ նոտ 42 հազար),
- ❑ Անուանության և կանանց երեխա ունենալու միջին տարիքի, ամուսնալուծությունների թվի կայուն աճ:

Ինչպես տեսնում ենք, **բոլոր վերը նշված խնդիրները գտնվում են կենսաթոշակային հին համակարգից դուրս**, թեև ազդում են վերջինի ֆինանսական կայունության վրա: Սակայն նույն խնդիրները ազդում են նաև այլ՝ սոցիալական, տնտեսական, պաշտպանական խնդիրների վրա: Հետևաբար, **այն սուտեցունք, թե հիմք ընդունել առկա ծանր վիճակը, երկարաժամկետ՝ տասնամյակների կտրվածքով հարմարեցնել կենսաթոշակային համակարգը նշված ծանր վիճակին, այլ ոչ թե լուծել ժողովրդագրական խնդիրները ծնող հարցերը, ընդունելի չի կարող լինել:**

ԿԱՆԱՆՑ ԽՆԴԻՐԸ

Նոր կուտակային կենսաթոշակային համակարգը ավելի է ծանրացնելու ժողովրդագրական վիճակը:

Այն սահմանափակելու է կանանց տնտեսական ակտիվությունը և չի խրախուսելու ծնելիությունը:

Կինը աշխատաշուկայում առավել պահանջված տարիները նվիրելով **3 և ավելի երեխաներ ունենալուն և դաստիարակությանը, անմիջապես դատապարտվում է աղքատության՝** հաջորդ տարիներին աշխատանքելով նա չի կարող բավարար գումար կուտակել տղամարդկանց հետ համարժեք թոշակ ստանալու համար: Տեղի է ունենալու կանանց զանգվածային աղքատացում: Բացի այդ, կտրուկ նվազելու է աշխատանքային շուկայում մրցունակությունը:

ԿՐԹԱԿԱՆ ԽՆԴԻՐԸ

Նույն հարցը վերաբերում է կրթությանը: Բարձրագույն և հետբուհական կրթության, գիտական գործունեության տարիները որևէ ազդեցություն չեն ունենա ապագա թռչակի վրա: Հետագայում միջին թռչակ ստանալու համար մարդը պետք է անմիջապես մտնի աշխատաշուկա՝ ի հաշիվ ընտանիք կազմելու, երեխա ունենալու և կրթություն ստանալու:

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԶԲԱՂՎԱԾՆԵՐԻ ԽՆԴԻՐԸ

Հայաստանում զբաղվածների զգալի մասը ներգրավված է գյուղատնտեսության ոլորտում: Գյուղատնտեսության զարգացվածության ներկա մակարդակի պայմաններում նրանք դուրս կմնան պարտադիր կուտակային կենսաթռչակային համակարգից և կհավակնեն միայն պետական բազային կենսաթռչակի: Իսկ դա նշանակում է, որ գյուղատնտեսությամբ զբաղվածները դատապարտված են աղքատ ծերության:

ԱՃԵՍՏԱՆՔԻ ՇՈՒԿԱՅԻ ՈՒՍԿԸ

Աշխատողները կարող են ժամանակարապես աշխատունակ չլինել, գտնվել երեխայի խնամքի արձակուրդում (մինչև 3 տարի), առկա ուսուցում ստանալ կամ երկու տարի ժամկետային գինձառայության մեջ գտնվել և այլն. անշուշտ, քիչ գումար կկուտակեն և հետևաբար ցածր կենսաթռչակ կստանան, ինչը արդարացի չէ և չի համապատասխանում ՀՀ Սահմանադրությամբ սահմանված սոցիալական պետության տեսլականին: Վերը նշված խմբերի համար նյութական վիճակի վատթարացումը հակասում է ՀՀ Սահմանադրությանը, բազմաթիվ միջազգային համաձայնագրերին, օրենքներին և ենթաօրենսդրական ակտերին, մասնավորապես՝ ՀՀ Սահմանադրության 35-րդը, 36-րդը հոդվածներին և 48-րդ հոդվածի 1-ին կետին, «Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիայի 3-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերին, Եվրոպայի սոցիալական խարտիայի 8-րդ հոդվածին, «Մայրության և մանկության պաշտպանության մասին» ՀՀ նախագահի 29.03.1996թ. հրամանագրին և այլն:

ԿՈՒՏԱԿՄԱՆ ԽՆԴԻՐԸ

Այն թեզը, որ հասարակությունը չգիտի կուտակել և նրան պետք է սովորացնել, այս տարիներին ապացուցեց իր սնանկ լինելը: Վերջին շրջանում բազմիցս



բարձրաձայնվեց, որ վերջին տաս տարիների ընթացքում ավանդագրված գումարների չափը ՀՀ բանկերում ավելացել է մի քանի անգամ: Եթե 2007 թվականի հունվարի 1-ի դրությամբ Հայաստանի բանկերում եղել են դրամական ավանդներ՝ ֆիզիկական անձանց անունից 143,6 մլրդ ՀՀ դրամ, ապա 2018-ի հունվարի 1-ի դրությամբ, Հայաստանի բանկերում, այդ ավանդների ծավալը կազմում է 1 տրիլիոն 553 մլրդ ՀՀ դրամ: ՀՀ քաղաքացիների խնայողությունները աճել են տաս անգամից ավելի: Ընդ որում, 2018 թվականի գարնանային իրադարձությունների ժամանակ, բազմաթիվ ավանդատուներ դուրս հանեցին իրենց գումարները, իսկ այնուհետև կրկին տեղադրեցին բանկերում:

Սա ապացուցում է, որ գումարների կուտակումը ավելի շատ պայմանավորված է քաղաքական և ֆինանսական կայունությամբ, ինչպես նաև ամենակարևոր հանգամանքով՝ բնակչության մոտ գումարների առկայությամբ:

ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ, ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱՑՈՒ ՀԱՎԵԼՅԱԼ ԲԵՌԻ ԽՆԴԻՐԸ

Հանրությունը և քաղաքական դաշտը բազմիցս մտահոգություններ են հայտնել երկրի տնտեսական վիճակի մասին, մատնանշելով պետական պարտքի շեշտակի ավելացումը, քաղաքացիների վճարունակության անկումը, թոշակների և աշխատավարձերի աճի բացակայությունը, տնտեսական ակտիվության ոչ բավարար մակարդակը և այլն:

Ողջ երկրի, այդ թվում պետական բյուջեի բեռի խնդիրը ներկայումս գործող համակարգի ամենաթույլ կողմերից է: Համակարգը ոչ միայն չթեթևացրեց, այլ նաև ավելացրեց այդ բեռը, թե՛ պետական բյուջեի, թե՛ քաղաքացիների համար: Իր հերթին համակարգը դարձավ լրացուցիչ բեռ ողջ տնտեսական դաշտի համար՝ նվազեցնելով սպառումը: Սյսինքն, **բոլոր սոցիալական, տնտեսական և ֆինանսական խնդիրներն ունեն հստակ պատճառներ և բացատրություններ:**

☑ 2010 թվականին ընդունված փաթեթով սահմանված **միասնական եկամտային հարկի 23-ը և առավել ևս 28 տոկոսը ավելի բարձր է, քան**

մինչ այդ գործող առանձնացված՝ եկամտահարկի և սոցվճարի մասհանումների ամբողջությունը:

- ❑ Արդեն բարձրացված **միասնական եկամտային հարկը քաղաքացիների ուսերին ավելացրեց հավելյալ 5 տոկոս բեռ:** Որքան էլ համակարգի կողմնակիցները ասեն, որ դա բեռ չի՝ դա քաղաքացու գումարն է, բոլորի համար պարզ է, որ սա ընդամենը բառախաղ է: Գործնականում քաղաքացու վճարած բոլոր հարկերը նույնպես իրենն են, քանի որ ուղղվում են իր կողմից սպառվող հանրային բարիքների ստեղծմանը: Փաստ է, որ տեղի է ունենում քաղաքացու իրական եկամտի անկում:
- ❑ **Պետական բյուջեից հավելյալ հինգ տոկոսի հատկացումը իր հերթին դարձավ բեռ պետական բյուջեի համար:** Սույն լուծումը իր հերթին հանգեցրեց նոր խնդիրների՝ սոցիալական անարդարության, սոցիալական ծրագրերի կրճատման, պակասուրդի խնդրի բարդացման:

ա) Կառավարությունը ողջ հանրության կողմից ձևավորված բյուջետային եկամտից, այդ թվում՝ նոր համակարգում չընդգրկված զբաղվածների գումարներից մասհանում է կատարում բնակչության մի փոքր թվի կուտակային հաշիվներին:

բ) Հանուն կենսաթոշակային ֆոնդերի գումարների համալրման և մի փոքր հատվածի օգտին մասհանումների կրճատվում են բյուջետային ծախսեր, որոնք կարող են ուղղվել բազմաթիվ սոցիալական ծրագրերի և հանրային բարիքների ստեղծմանը:

գ) Մռաջանում են լրացուցիչ դժվարությունների պակասուրդի զսպան հարցում:

- ❑ **Քաղաքացիների ամենամյա եկամուտներից միասնական եկամտային հարկի և հավելյալ հինգ տոկոսի գանձումից նվազում է սպառման ոլորտը 6-7,5 տոկոս:** Համակարգի կողմնակիցները այդպես էլ չներկայացրեցին իրենց հաշվարկը, թե որքան է ազդել քաղաքա-



ցիների եկանոսների անկումը առևտրի և ծառայությունների վրա: Նկատի ունենալով յուրաքանչյուր տարի այդ թվի ավելացումը, ակնհայտ է բացասական ազդեցությունը տնտեսության որոշ ճյուղերի վրա:

- ❑ **Պետական բյուջեի բեռի ավելացման հաջորդ հանգամանքը պայմանավորված է պետության պարտավորությանը շարունակել վճարել հին համակարգում նսացած քաղաքացիների կենսաթոշակները:** Այսինքն նոր համակարգի գործադրումը պետական բյուջեի ծախսերի ավելացման պայմաններում չի չեղարկում պետության պարտավորությունը շարունակելու վճարել հին համակարգին: Այսինքն տեղի է ունենում բեռի պահպանում միջոցների կրճատման պայմաններում:
- ❑ **Քանի որ ընդդիմախոսները մշտապես նշում էին, որ միայն կուտակային կենսաթոշակների վրա հույսը դնելով պետությունը չի ստեղծում նվազագույն երաշխիքներ կենսաթոշակային տարիքի քաղաքացիների համար, Կառավարությունը օրենսդրական փաթեթով սահմանեց, որ շարունակելու է վճարել պետական կենսաթոշակ բոլոր քաղաքացիների համար՝ անկախ նրանց կենսաթոշակի ձևից (հավելյալ բեռ բյուջեի համար թե հին համակարգով, թե նորով թոշակի անցնողների մասով): Հետևաբար, բեռի թեթևացում նույնիսկ նոր համակարգի ամբողջական գործադրման դեպքում տեղի չի ունենալու, քանի որ բոլորը գուզահեռ ստանալու են պետական բազիսային կրթաթոշակ: Իսկ այս դրույթի վերացման դեպքում վտանգ կա ընդհանրապես նսալ առանց թոշակի:**
- ❑ **Մասնակցի կողմից կուտակված գումարների (ճշգրտված գնաճով) երաշխիք նույնպես տրվելու է պետական բյուջեի հաշվին, այսինքն պոտենցիալ բեռ է դառնալու բյուջեի համար: Իսկ հաշվի առնելով, որ տարիների ընթացքում աճելով գումարը մեծանալու է, ապա պետական բյուջեն պարզապես ի վիճակի չի լինելու երաշխավորել քաղաքացիների խնայողությունները: Այն դեպքում, երբ Սահմանադրական դատարանը պահանջում է, որ երաշխիքներ տրամադրեն նաև պետության կողմից տրամադրված խնայողությունների համար ճշգրտված գնաճին համապատասխան:**

Պարտադիր կուտակային կենսաթոշակային համակարգի մասնակիցների և կատարված վճարների վերաբերյալ տես Հավելված 1. և 2.:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՇՈՒԿԱՅԻ ՌԻՍԿԸ

Ֆինանսական շուկայի ռիսկը ուղեկցելու է համակարգին իր ողջ գոյության ընթացքում: Եթե աշխատողը հասնի թոշակային տարիքի **տնտեսական ճգնաժամից անմիջապես հետո, նրա կուտակած գումարները և ստանալիքը կենսաթոշակը ցածր կլինեն:**

Եթե աշխատողը տարիներ շարունակ իր կուտակած գումարները փորձանի ավելի մեծացնել, ապա ֆինանսական շուկայում տատանումների արդյունքում կարող է կորցնել բարձր և ցածր եկամտաբերություն ունեցող ֆոնդերում ներդրումներ կատարելիս, ինչի պատճառով, աշխատողը կենսաթոշակի անցնելուց հետո, կարող է ունենալ գլխավորապես պետական կենսաթոշակ և ցածր կենսամակարդակ:

Վերջին տարիների ընթացքում զարգացած և զարգացող երկրներում էականորեն նվազում է կենսաթոշակային ակտիվների եկամտաբերությունը. առանձին երկրներում եկամտաբերությունը նույնիսկ գրոյին է սոստենում՝ ֆոնդի կառավարիչների ծառայությունների վճարները հատուցելուց հետո:

ԲՅՈՒՋԵՅԻ ՊԱԿԱՍՈՒՐԴԻ և ԵԿԱՍՏԻ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ԲԱՐՁՐԱՅՄԱՆ ԽՆԴԻՐԸ

Պարտադիր կուտակային համակարգի անցման տարիներին հնարավոր է պետական բյուջեի դիֆիցիտի ավելացում, պետական բյուջեից հատկացումները կրթության, առողջապահության և այլ ուղղություններով կնվազեն: Եւոյնը վերաբերում է աշխատավարձերի և թոշակների բարձրացմանը:

Վերջին տարիներին աշխատավարձի և թոշակի բարձրացում, ըստ էության, տեղի չի ունեցել: Ֆինանսական ոլորտի մի շարք նախկին պատասխանատուներ չէին թաքցնում, որ աշխատավարձերի և թոշակների բարձրացում, առաջիկա մի քանի տարիներին, չի լինելու:



Նոր Կառավարության ներկայացուցիչները չեն թաքցնում, որ եկամուտների բարձրացման հարցը թեև քննարկվում է, սակայն բավական բարդ խնդիր է:

Ակնհայտ է, որ **կուտակային համակարգի ծախսատարությունը, որը տարեցտարի ավելանալու է, առեղիվ գումարներ է տանելու պետական բյուջեից ավելի դժվարացնելով բնակչության եկամուտների բարձրացման քաղաքականության իրականացումը: Եվ քանի որ բարձր աշխատավարձը մեծացնելու է պետական բյուջեից ելքերը, Կառավարության համար աշխատավարձի բարձրացումը, այս իմաստով, ցանկալի չէ:**

ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՈՒՄ «ՆԵՐԳՐՈՒՄՆԵՐԻ» ԿԱՍ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՊԿԱՍՈՒՐԳԻ և ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔԻ ԱՎԵԼԱՑՄԱՆ ԽՆԴԻՐԸ

Երբ խոսվում է Հայաստանի տնտեսությունում գումարների ներդրման նախին, հարկավոր է հասկանալ, որ իրականում գործում է այլ մեխանիզմ: Հաշվի առնելով աճած առեղիվ ֆինանսական բեռը, պետական միջոցների պակասուրդի խնդիրը Կառավարությունը լուծում է **նույն ֆոնդերից՝ իր իսկ կողմից փոխանցված գումարները պարտատոմսերի դիմաց վերցնելով:** Անկնհայտ է, որ այս մոտեցումը, պետական ֆինանսների կառավարման տեսանկյունից, առնվազն տնտեսամետ չէ, և հետևաբար նաև՝ արդյունավետ կառավարման տեսանկյունից՝ անհասկանալի: Այսինքն, հանրային միջոցները միջնորդ կառավարիչների միջոցով կրկին տրվում են Կառավարությանը, բայց արդեն տոկոսով: 01.06.2018 թվականի դրությամբ ֆոնդերի ակտիվները տեղաբաշխված են՝ հայաստանյան բանկերում ձևակերպված ավանդները՝ նոտ 30,3 տոկոս, այնուհետև, ՀՀ պետական պարտատոմսերը՝ 30,2 տոկոս կամ 37,3 մլրդ. ՀՀ դրամ, օտարերկրյա ներդրումային ֆոնդերի արժեթղթերը (արտարժույթով)՝ 28,4 տոկոս կամ 35,1 մլրդ. ՀՀ դրամ, կոորպորատիվ, հիփոթեքային և միջազգային կազմակերպությունների պարտատոմսեր՝ 9,1 տոկոս կամ 11,3 մլրդ. ՀՀ դրամ, ավանդներ և հաշվիներ ոչ ռեզիդենտ բանկերում՝ 2 տոկոս կամ 2,5 մլրդ. ՀՀ դրամ: Վերջին տարիներին նկատվում է նաև եկամտաբերության անկում: Առավել սանրամասը տե՛ս Հավելվածներ 4. և 5.-ը:

Ձևավորվել է պետական բյուջեի միջոցները վառնելու և բյուջեի բեռի շարունակական ավելացման երկարատև մեխանիզմ, որի ավարտը կարող է լինել բյուջետային սնանկությունը:

ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՆԴԻՐԸ

Պարտադիր կուտակային կենսաթոշակային առանձնահատկություններից մեկն այն է, որ Հայաստանի պարագայում, **Կենտրոնական բանկն է գլխավորել այս համակարգի ներդրումը, այլ ոչ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը:** Կենտրոնական բանկի գլխավոր նպատակը ոչ թե թոշակառուների համար լավ կյանքի պայմաններ ապահովելն է, այլ ֆինանսական շուկայի զարգացումը, գների կայունության ապահովումը: **Ֆինանսական շուկաները պետք է զարգացնել ոչ թե պարտադիր կուտակային կենսաթոշակային համակարգի ներդրման միջոցով՝ թոշակառուների կենսաթոշակները վտանգելով,** այլ ժողովրդի ֆինանսական համակարգի հանդեպ վստահության բարձրացման, սովետային տնտեսության կրճատման, դրամի քանակի ավելացման, ներդրումային միջավայրի արդյունքահեն բարելավման, տնտեսական ներուժի առաջանցիկ ընդլայնման և աշխատաշուկայի կայուն հավասարակշռության ապահովման և այլն միջոցներով:

ՖՈՆԴԵՐԻ ԿԱՌԱՎԱՐԻՉՆԵՐԻ ԽՆԴԻՐԸ

Բարձր գնահատելով Հայաստանում ֆոնդերի կառավարումն իրականացնող միջազգային կազմակերպությունների համաշխարհային հեղինակությունը, հարկ է նշել, որ **ֆոնդերի կողմից միջոցների կառավարումը անհատույց չէ:**

Ավելին, **այս համակարգը, կառավարման տեսակետից, ավելի ծախսատար է, քան պետական համակարգը:** Ֆոնդերի կառավարիչները գանձում են բարձր գումարներ իրենց ծառայությունների դիմաց:

Հայաստանի դեպքում այդ ծառայության համար սահմանված պարզևավճարը կարող է հասնել 1.5 տոկոսի (Օրենքի 47-րդ հոդվածի 2-րդ կետը): Ըստ Օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ պարբերության. «... կենսաթոշակային ֆոնդի կառավարիչը, պարտադիր կենսաթոշակային ֆոնդի ակտիվների հաշվին, կարող է կատարել նաև տվյալ պարտադիր կենսաթոշակային ֆոնդի կառավարման հետ կապված ծախսեր, որոնց կազմը և առավելագույն չափը սահմանում է Կենտրոնական բանկը՝ համաձայնեցնելով Հայաստանի Հանրապետության կառավարության ֆինանսական ոլորտի պետական լիազոր-



ված սարմնի հետ»: Սյսինքն՝ բացի պարզևավճարներից ֆոնդերի կառավարիչները կառավարչական ծախսերի համար փոխհատուցում կարող են ստանալ:

Հավելված 3.-ի համաձայն՝ պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի զուտ ակտիվները հիմնականում տեղաբաշխված են պահպանողական ֆոնդերում, այսինքն՝ համակարգը ինքնաշխատ եղանակով տեղաբաշխում է իրականացրել: Փաստացի, պարտադիր կուտակային կենսաթոշակային համակարգի նասակիցները, առ այսօր, չունեն բավարար տեղեկատվություն և հնտություններ ակտիվների կառավարիչ և ֆոնդ ընտրելու համար:

Ֆոնդերի եկանոտաբերությունը 2018թ. ընթացքում (տարեկանացված) կազմել է **6.9 տոկոս**: Սեկ փայի արժեքը ստեղծման պահին 1000 ՀՀ դրամից աճել է մինչև 1463 ՀՀ դրամ:

01.06.2018թ. դրությամբ կենսաթոշակային ֆոնդերի զուտ ակտիվների արժեքը կազմել է 123.4 մլրդ դրամ (զուտ ակտիվներ/ՀՆԱ հարաբերակցությունը կազմել է 2.3%):

Կենսաթոշակային ցանկացած բարեփոխում կամ նոր համակարգի ստեղծում **չպետք է իրականացվի ի հաշիվ այլ կազմակերպությունների օրինական առևտրային շահի**, ինչըը պետք է հաշվի առնել ցանկացած սցենարի դեպքում: Միջազգային փորձը վկայում է, որ կուտակային համակարգից դուրս գալու արդյունավետ դեպքեր, համաշխարհային պրակտիկայում, գոյություն ունեն:

Եվ որևէ տնտեսվարողի առևտրային շահ չի կարող ավելի բարձր լինել, քան անկախ պետության ինքնիշխանությունն ու սեփական երկրի և ժողովրդի շահը, երկրի ու ժողովրդի ազգային անվտանգությունը:

ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱՓՄԱԿՈՒԹՅՈՒՆԸ

ՀՀ կենտրոնական բանկի կողմից, օրենսդրությամբ սահմանված չափորոշիչների համաձայն, ընտրվել են երկու ակտիվների կառավարիչներ՝ «Անոնդի-

ԱԿԲՍ Ասեթ Սենեջմենթ» ՓԲԸ-ն և «Ցե-Կվադրատ Անպեգա Ասեթ Սենեջմենթ Արմենիա» ՍՊԸ-ն, որոնք առաջարկում են գումարները ներդնել 3 ֆոնդերում՝ կայուն եկամտային, պահպանողական և հավասարակշռված: Հատկանշական է, որ այս երկու կառավարիչների միևնույն ֆոնդերի դեպքում պահանջվում են նույն չափի պարզևավճարներ (Տես Հավելված 3.): Ըստ էություն՝ ֆոնդերի կառավարման շուկան՝ դոտպոլիա է, որտեղ ֆոնդի կառավարիչները չեն մրցակցում ցածր պարզևավճարներ առաջարկելով կամ բարձր եկամուտներ ապահովելով: Չի խրախուսվում կենսաթոշակային ակտիվների նոր կառավարիչների ի հայտ գալը՝ ոչ տեղական և ոչ էլ միջազգային:

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԻ ԱՑԵՆԱՐՆԵՐԻ ԱՆՈՐՈՇՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐԸ

Կուտակային կենսաթոշակային համակարգի պարադոքսներից է տնտեսական աճի ազդեցության հարցը կուտակված միջոցների վրա:

Տնտեսական աճի ազդեցության վերլուծության ժամանակ կարող են գործել երեք սցենարներ.

- ❑ Տնտեսական ցածր աճ (կամ ֆինանսատնտեսական ճգնաժամ և տնտեսության անկում),
- ❑ Ներկայիս ցուցանիշների կայուն պահպանում տասնամյակների համար,
- ❑ Բարձր տնտեսական աճ:

Առաջին սցենարի (ցածր տնտեսական աճ) դեպքում ինքնին պարզ է երկրի տնտեսության և ֆինանսական համակարգի մտահոգիչ լինելու հանգամանքը՝ բոլոր ուղեկցող հետևանքներով (բյուջեի խնդիրներ, քաղաքացիների կենսականարդակի որակական փոփոխությունների բացակայություն կամ նույնիսկ անկում և այլն): Այդ պատճառով ինքնին հոռետեսական սցենարին անդրադառնալու կարիք չկա:

Երկրորդ սցենարը այն դեպքն է, որը կարող է թույլ տալ կատարել սաթեմատիկական հաշվարկներ և հիմնավորել կուտակային համակարգի կողմից



ընձեռվող հնարավորությունները: Սյս չեզոք սցենարի համաձայն՝ հիմք է ընդունվում կայուն ցուցանիշների պահպանումը երկարաժամկետ կտրվածքով: Սյս սցենարը ենթադրում է, որ տասնամյակների ընթացքում համակարգի վրա չեն ազդելու այն բազմաթիվ ռիսկերը, որոնք առկա են (քաղաքական, տնտեսական, սոցիալական, ժողովրդագրական և այլն), ինչպես նաև հաստատուն է ընդունվում Հայաստանի ներկայիս տեղը համաշխարհային տնտեսության դաշտում:

Հասարակությունը պետք է պատասխանի երկու հարցի՝

- ❑ Որքան է իրեն գոհացնում Հայաստանի ներկայիս սոցիալական և տնտեսական մակարդակը,
- ❑ Որքան է համոզված տասնամյակների ընթացքում որևէ ռիսկի ներգործության բացակայության հարցում:

Երրորդ սցենարը ամենահետաքրքրականն է: Սույն սցենարի պարադոքսը այն է, որ ժամանակի ընթացքում, տնտեսության շեշտակի աճի, բնակչության կենսամակարդակի և միջին աշխատավարձի էական բարձրացման դեպքում կուտակված գումարները (նույնիսկ առանց որևէ ռիսկի փոխազդեցության) ապահովելու են աղքատության շեմից ցածր կենսաթոշակ: Սյլ կերպ ասած, եթե տնտեսական զարգացման որևէ փուլում բնակչության կենսամակարդակը բարձրանա և օրինակ մի քանի տարվա մեջ Հայաստանը մոտենա Արևելյան Եվրոպայի երկրների կենսամակարդակին և միջին աշխատավարձերին, ապա կուտակված գումարները բավարարելու են միայն քաղաքացիների այսօրվա Հայաստանի կենսամակարդակին համարժեք կենսաթոշակի տրամադրման համար:

ՎԵՐՋՆԱՐԳՅՈՒՆՔՈՒՄ ԹՈՇԱԿԻ ՉՍՓԻ ԱՆՈՐՈՇՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐԸ

Կուտակային համակարգի պայմաններում կենսաթոշակային տարիքի հասած մարդու **թոշակի չափը շարունակում է մնալ անորոշ**: Իր հաշվին կուտակված գումարներով քաղաքացին դեռ պետք է ապահովագրական ընկերություններից ձեռք բերի կյանքի ապահովագրություն (անուիտետ): **Որքան**

թոշակ մասնավոր ապահովագրական ընկերությունները կվճարեն կուտակված գումարների դիմաց որևէ մեկը այսօր ասել չի կարող:

ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՆՇՐՋԵԼԻՈՒԹՅԱՆ ԽՆԳԻՐԸ

Սիջազգային փորձը վկայում է, որ նույնիսկ տասնամյակներ անց դժվարությամբ, սակայն հնարավոր է չեղարկել կուտակային կենսաթոշակային համակարգը:

Սիջազգային փորձը տես Մաս 3-ում, իսկ Հայաստանում դրա հնարավորությունների մասին՝ սույն հետազոտության Մաս 5-ում:

ՀԻՄՆԱՎՈՐՈՂ ԱԿՏՈՒՄՐԱԿԱՆ ՀԱՇՎԱՐԿԸ

Կուտակային համակարգի կողմնակիցները օրենսդրական փաթեթի ընդունման շրջանում հայտարարում էին, որ ունեն բազմաթիվ ակտուարական հաշվարկներ: Ազգային ժողովում քննարկան ժամանակ Արտեմ Սատրյանը նույնիսկ հայտարարեց մինչև 2080թ. հաշվարկի առկայության մասին: Սակայն երբեք նման հաշվարկները չեն ներկայացվել համակարգի ընդդիմախոսներին:

Կուտակային կենսաթոշակային համակարգի ամբողջական ներդրումը 4 տարով հետաձգման ազդեցության գնահատման մասով վերլուծություններ չեն իրականացվել, սակայն փաստն այն է, որ հետաձգումը բավականին բացասական արձագանք է ունեցել թե՛ կենսաթոշակային ֆոնդերի ակտիվների կառավարիչների, թե՛ միջազգային դոնորների և թե՛ առհասարակ, համակարգի կայացման վրա:

Հայաստանի **ապագայի համար տեսական հաշվարկ ունեցող** կուտակային համակարգի կողմնակիցների փաստարկները ավելի **հիմնավոր կլինեին, եթե ներկայացվեր հետհաշվարկ՝** հիմնավորվեր, որ Հայաստանի կամ եվրոպական երկրների կողմից այս համակարգին անցումը, օրինակ, 1970-ականներին, այսօր կապահովեր ավելի բարձր կենսաթոշակ, քան ներկայումս:

Կուտակային համակարգ չունենալու պատճառով զարգացած պետությունների ճգնաժամի բացատրությունը կարող է հիմնավորվել միայն հաշվարկներով՝



ապացուցելով, որ, օրինակ, Արևմտյան Եվրոպայի երկրներում 30-40 տարի առաջ այդ համակարգի ներնուծումը կրեերեր ավելի բարձր թոշակի, քան այսօր կա:

Նման հաշվարկ գոյություն չունի և երբեք չի ներկայացվել:

ԿՈՍՄՎՈՐՈՒԹՅԱՆ ՎՍՏԱՀՈՒԹՅԱՆ, ԹԵ՛ ԲԱՐԵՓՈՒՈՒՄՆԵՐԻ ՆԿՎՏԱՍՄ ՎՍՏԱՀՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐԸ

Երբեք, որևէ երկրում, նման բարեփոխում չի կարող հաջողություն ունենալ առանց հանրային լայն աջակցության: Սա պետք է լինի յուրաքանչյուր քաղաքացու գիտակցված ընտրություն: Նման աջակցության բացակայությունը որոշ Կառավարություններ փոխընդհարել են ավտորիտար կառավարման պայմաններում որոշումների ընդունմանը:

Այստեղ սակայն խնդիրը այնքան որոշումների ընդունման մեջ չէ, որքան վստահության համակարգի արդյունավետության անհրաժեշտության մեջ: Կուտակային բարեփոխումը անբողջապես իր արդյունավետությունը կարող է ապացուցել տալ միայն տասնամյակների արդյունքում, ընդ որում յուրաքանչյուր տարի վտանգվելով տարբեր ռիսկերի պատճառով: Հետևաբար տվյալ օրվա **նույնիսկ ամենամեծ ժողովրդականություն վայելող իշխանությունը չի կարող հանդիսանալ համակարգի բազմաթիվ՝ քաղաքական, տնտեսական, ֆինանսական և այլ բնույթի երկարաժամկետ ռիսկերից երաշխավոր:**

ԼԱՅՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ և ՎՍՏԱՀՈՒԹՅԱՆ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ

Նման լայնամասշտաբ և երկարաժամկետ բարեփոխումների իրականացման համար անհրաժեշտ է լայն հանրության աջակցությունն և վստահությունը. դա որևէ կապ չունի տվյալ պահի իշխանությունների ձևավորման օրինականության կամ վստահելիության հետ: Մնշուշտ, վերջին տարիներ ընթացքում ներդրվել են մի շարք գործիքներ, որոնք հնարավորություն են տալիս մասնակցին տեղեկանալ իր հաշիվներում կուտակումների չափի և շարժի մասին, մասնավորապես՝ աշխատավարձային քարտերի միջոցով: Այնուամենայնիվ, նկատի ունենալով, որ կուտակային կենսաթոշակների իրական արդյունքները հնարավոր է փաստացի տեսնել և գնահատել, առնվազն 20-25 տարի հետո, մասնակիցները արդարացիորեն չեն վստահում:

Կենսաթոշակային բարեփոխումների համար հանրության աջակցությունը և կարծիքը ստանալու համար երբեմն երկրները դիմում են հանրաքվեի կամ պլեբիսցիտի օգնությանը: Օրինակ՝ 1996 թվականին Նոր Զելանդիայում նոր ձևավորված կոալիցիոն կառավարությունը ներկայացրեց պարտադիր կուտակային կենսաթոշակային համակարգի բարեփոխումների փաթեթը, որը 1997 թվականին դրվեց հանրաքվեի: Հանրաքվեի մասնակիցների 91.8 տոկոս քվեարկեց դեմ, միայն 8.8 տոկոսը՝ կողմ: Արդյունքում՝ նորգլեանդացիները մերժեցին պարտադիր կուտակային կենսաթոշակային համակարգը:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՒՍԿԻ ԽՆԴԻՐ

Հայաստանում, երեսուն տարվա ընթացքում, տեղի ունեցան այնպիսի իրադարձություններ, ինչպիսիք են Արցախյան շարժումը և պատերազմը, Սպիտակի երկրաշարժը, Խորհրդային Միության փլուզումը, ազգային դրամի ներմուծումը, դրամի պարբերական կտրուկ արժեզրկումները, ներքին քաղաքական և տնտեսական ցնցումները, գործազրկության խրոնիկ բարձր մակարդակը, կոռուպցիան և ստվերային տնտեսության պահպանվող մեծ տեսակարար կշիռը, կայուն աճող արտաքին պարտքը և այլն:

Եվրոպայում ազգային դրամները փոխարինվեցին Եվրոյով, միավորվեցին և բաժանվեցին երկրներ, փոխվեց միգրացիոն ռեժիմը, ավարտվեց «սառը պատերազմը», եղան նայրցամաքի վրա ազդող քաղաքացիական պատերազմներ և այլն:

Սվեդի վաղ ժամանակաշրջանը վերցնելով, հասնելու ենք «սառը» պատերազմի տարիներին, իսկ դրանից առաջ երկրորդ և Սոաջին Համաշխարհային պատերազմներին:

Հետևաբար, մի քանի **տասնամյակի ժամանակահատվածը շատ երկար է և ռիսկային նմանատիպ ծրագրերի իրականացման համար, որտեղ ներքին ռիսկերին գումարվում են նաև տարածաշրջանային և համաշխարհային ռիսկերը:**



ՄԱՍ 5.

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՆՈՐ

ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Կենսաթոշակային համակարգի բարեփոխման խնդիրն աշխարհի բոլոր պետությունների ամենօրյա օրակարգի հարցն է: Երկրները նշտապես փնտրում են առավել արդյունավետ եղանակեր իրենց քաղաքացիների արժանապատիվ ծերությունը ապահովելու համար:

Հայաստանի Հանրապետությունը նույնպես կարիք ունի կենսաթոշակային բարեփոխումների շուրջ մեծ հանրային քննարկման և նոր համակարգի նշակման:

Նման քննարկումը պետք է լուծի երեք հիմնական խնդիր.

- ❑ Պարտադիր կուտակային կենսաթոշակային համակարգի չեղարկման անցումային շրջանի միջոցառումների կազմում,
- ❑ Կամավոր կուտակային համակարգի զարգացման համար խթանիչ միջոցների ձևավորում,
- ❑ Նոր կենսաթոշակային համակարգի նշակում:

Նոր կենսաթոշակային համակարգի նշակումը օրյեկտիվորեն պահանջելու է որոշակի ժամանակ՝ խորքային ուսումնասիրությունների, իրավիճակի համակողմանի գնահատման, համակարգի մեխանիզմների նշակման, հանրային լայն քննարկումների իրականացման համար: Սյա ընթացքում նախ անհրաժեշտ է՝ հեղաձգել 2018 թվականի հուլիսի 1-ից ուժի մեջ մտնող օրենսդրական այն դրույթը, որն անխոսափելիորեն կխորացնի վիճահարույց պարպադիր կուտակային բաղադրիչի ներդրման գործընթացը և արդյունքում՝ ևս մեկ անբողջական քայլ կարվի դեպի «անվերադարձելիության սահմանը»՝ նա-

խաղտեղով շորջ 80 հազար նոր մասնակիցների պարտադիր ներգրավումը: Մյուս կողմից, մինչև խնդրի վերջնական և բազմակողմանի լուծումը, առկա ռիսկերը հաշվի առնելով, անհրաժեշտ է նաև համակարգի մասնակիցների համար առավելագույնս նվազեցնել պարտադիր նպատակային վճարի դրույքաչափը:

ՊԱՐՏԱԴԻՐ ԿՈՒՏԱԿԱՅԻՆ ՀԱՍՏԱՐԳԻ ՉԵՂԱՐԿՈՒՄ

Պարտադիր կուտակային կենսաթոշակային համակարգի չեղարկումը **անմիջապես** կապահովի հետևյալ կարևորագույն խնդիրների լուծում.

- ❑ Մասամբ կավելանան համակարգում ընդգրկված քաղաքացիների եկամուտները,
- ❑ Կնվազեն պետական բյուջեի ծախսերը (տարեկան 21 մլրդ. ՀՀ դրամ) և ճնշումը պետական բյուջեի պակասուրդի վրա,
- ❑ Չի առաջանա հավելյալ պարտք վերցնելու անհրաժեշտություն,
- ❑ Կավելանան տնտեսության սպառման ծավալները և կձևավորվի տնտեսական ակտիվության լրացուցիչ իրական խթան:

Չեղարկումը պետք է իրականացվի հաշվի առնելով համակարգում ներառված բոլոր կողմերի՝ պետության, ֆոնդերի կառավարիչների, քաղաքացիների շահերը:

Կուտակված գումարները պետք է տեղադրվեն քաղաքացիների անհատական հաշիվներին և հաստատվի դրանց տնօրինման պայմաններն ու ժամանակացույցը:

Ֆոնդերի կառավարիչների կողմից տեղաբաշխված երկարաժամկետ պարտատոմսերը կարող են վերաձևակերպվել որպես պետական բյուջեի առջև երկարաժամկետ պարտավորություններ:



ԿԱՍԱԿՈՐ ԿՈՒՏԱԿԱՅԻՆ ԽԹԱՆՈՒՄ

Վերջին տարիները հստակ ապացուցեցին, որ եթե

ա) քաղաքացիների տնօրինության տակ լինում են հավելյալ միջոցներ,

բ) առկա է քաղաքական և տնտեսական կայունություն,

գ) առկա է վստահություն բանկային համակարգի նկատմամբ,

ապա քաղաքացիների ավանդները արձանագրում են աճի միտում:

Սույն միտումը շարունակելու և երկարաժամկետ կուտակման մշակույթը զարգացնելու համար առկա են լավ պայմաններ:

Մնիրաժեշտ է շարունակել աշխատանքը ինչպես բանկային համակարգի զարգացման և այն քաղաքացիներին ավելի սոտ, մատչելի և առօրյայի անբաժանելի մաս դարձնելու (այդ թվում՝ անկանխիկ գործարքների կշռի ավելացման), այնպես էլ երկարաժամկետ ավանդագրման կամ կենսաթոշակային տարիքում սպառելու նպատակով կուտակման համար: Հատկանշական է, որ պարտադիր կուտակային կենսաթոշակային համակարգի 4 տարիների գործունեության ընթացքում կանաժոր հիմունքներով միացել են ընդամենը **476 անձ** (Տես Հավելված 2):

Կանաժոր կուտակային համակարգի կիրառումը պետք է իրականացվի առողջ միջավայրում՝ քաղաքացի-ֆինանսական կազմակերպություններ փոխհամագործակցության և այդ համակարգի պետական կարգավորման պայմաններում:

ՆՈՐ ՀԱՍՏԱՎՈՐԳԻ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Հայաստանի համար, նոր կենսաթոշակային համակարգ մշակելուց առաջ, անհրաժեշտ է որոշել այն հիմնարար սկզբունքները, որոնց վրա պետք է կառուցել այդ համակարգը: Հաշվի առնելով ՀՀ Սահմանադրական դատարանի ՍԳՈ-1142 և ՍԳՈ-1224 որոշումները, ինչպես նաև Տնտեսական համագործակ-

ցության և զարգացման կազմակերպության և G20-ի նոտեցումները՝ առաջարկվում են հետևյալ սկզբունքները՝

i. Սոցիալական ապահովությունը՝ որպես անձի իրավունք

Մարդուն չպետք է պարտադրել օգտվելու այս կամ այն կենսաթոշակային համակարգից, երբ գոյություն չունի պետական լիակատար երաշխիք:

Ցանկացած բնույթի մասնավոր կենսաթոշակային համակարգի առկայության պայմաններում քաղաքացին պետք է ունենա պետական կենսաթոշակային համակարգից օգտվելու այլընտրանք և անհատական որոշումներ կայացնելու ազատ իրավունք:

ii. Սոցիալական ապահովությունը՝ որպես պետության պոզիտիվ պարտավորություն

Պետությունը պարտավոր է ապահովել հասարակության այն խավերի կենսաապահովությունը, ովքեր իրենցից անկախ պատճառներով դա անել չեն կարող:

iii. Միջսերնդային և ներսերնդային համերաշխություն

Ներկայիս աշխատող սերունդը պետք է ապահովի ավագ սերունդի հնարավորինս բարեկեցիկ ծերությունը, ինչպես նաև, ելնելով իր մասնակցության աստիճանից, պետք է ստանա համապատասխան թոշակ: Միաժամանակ, ցածր եկանուտ ստացողի կենսաթոշակը պետք է հարաբերականորեն ավելի բարձր լինի, քան բարձր եկանուտ ստացողի կենսաթոշակը:

iv. Սոցիալական ապահովության համար նպատակային վճարներ

Մյուս վճարները պետք է փոխանցվեն պետական բյուջեի հատուկ հաշվին: Օրենքով սահմանված չափով և կարգով վճարների մի մասը կարող է ուղղվել պայմանական կուտակման՝ բացառապես անձի սեփական պատասխանատվությանը և ռիսկով:



v. Ինդեքսավորված կենսաթոշակներ

Կենսաթոշակները չպետք է կորցնեն իրենց գնողունակությունը և դրանց մակարդակը պետք է համապատասխանի տվյալ ժամանակահատվածում երկրի տնտեսության զարգացածության աստիճանին և բնակչության կենսամակարդակին:

vi. Անրողջական մասնակցության ապահովում

Հասարակության բոլոր շերտերի համար պետք է ապահովել բարեկեցիկ կենսաթոշակային համակարգ: Սռավել տարածված և ընդունելի է, երբ կենսաթոշակային մասհանումներին մասնակցում են գործատուն, աշխատողը և պետությունը: Կորպորատիվ պատասխանատվության շրջանակներում գործատուների կողմից աշխատողների կենսաթոշակային ապահովմանը մասնակցությունը պետք է դառնա աշխատողի ներգրավման համար մրցակցության հիմնական գործոն:

vii. Հանարժեքություն

Կենսաթոշակը պետք է բավարար լինի արժանապատիվ կյանք վարելու համար: Թոշակի մեծության համար ելակետ պետք է հանդիսանա կենսաապահովման նվազագույն սպառողական զանբյուրի կամ տվյալ պահին երկրի միջին աշխատավարձի (ամսվազն 40 տոկոսը) մեծությունները:

viii. Ֆինանսական կայունություն

Սոցիալական ապահովության վճարները և թոշակները պետք է հնարավորինս համարժեք լինեն, որպեսզի պետական բյուջեի վրա բեռ չդառնան:

ix. Սրդարության սկզբունք

Տարիների ընթացքում աշխատողների կողմից կատարվող վճարումների չափը պետք է դրականորեն ազդի հետագայում ստացվող թոշակների չափի

վրա: Անհրաժեշտ է սահմանել անձի ընթացիկ և հեռանկարային կենսապահովման միջև խելամիտ հարաբերակցություն: Նոր կենսաթոշակային համակարգը չպետք է էականորեն նվազեցնի աշխատողի ընթացիկ կենսամակարդակը:

x. Օրինական աշխատանքի խթանում

Կենսաթոշակային համակարգը պետք է խթանի ավելի երկար աշխատանքային գործունեությունը: Աշխատանքային ստաժը նույնպես պետք է հաշվի առնվի թոշակի որոշման ժամանակ:

xi. Կազմակերպական արդյունավետություն

Կենսաթոշակային համակարգի արդյունավետությունը պետք է բարձրացնել, օրինակ՝ համակարգի ծախսատարության կրճատման միջոցով:

xii. Դիվերսիֆիկացում

Կենսաթոշակային համակարգի ռիսկերի նվազեցման համար անհրաժեշտ է ներդնել զուգահեռ գործող և իրար հետ համագործակցող տարբեր կենսաթոշակի ձևեր՝ պետական, մասնավոր, կոորպորատիվ և այլն:

xiii. Չհարկվող նվազագույն եկանոտ

Նվազագույն եկանոտներից պահումներ չպետք է արվեն, ինչպես նաև պետք է հաշվի առնել անձի ընտանիքի անդամների սոցիալական վիճակը, իսկ նվազագույն աշխատավարձը պետք է կապվի կենսապահովման նվազագույն բյուջեի հետ:

xiv. Հիմնախնդիրների համալիր լուծում

Կենսաթոշակային համակարգը չպետք է քողարկի այլ ոլորտների բացթողումները: Ժողովրդագրական, աշխատաշուկայի, սուվերային տնտեսության,



թաքնված զբաղվածության և այլ խնդիրները պետք է ենթարկվեն համալիր լուծումների, այլ ոչ թե տվյալ ոլորտների թերությունները չլուծելու պայմաններում դրանց հարմարեցվի կենսաթոշակային համակարգը:

xv. Անմիջական ժողովրդական իշխանության ապահովում

Հանրային վստահություն և աջակցություն ստանալու նպատակով հնարավոր ենք համարում նոր կենսաթոշակային համակարգին անցնելու հարցը դնել հանրաքվեի:





ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

Հավելված 1. Մասնակիցների և կատարված վճարների վերաբերյալ տվյալները

Տարեթիվ	Պետության փոխանցումներ	Մասնակցի փոխանցումներ	Ընդամենը փոխանցումներ	Պետական հատվածի մասնակիցների քանակ	Մասնավոր հատվածի մասնակիցների քանակ	Ընդամենը մասնակիցներ
01/01/2014–31/07/2014	2,743,613,203	2,223,712,048	4,967,325,251	49,500	32,070	81,570
8/31/2014	566,714,721	566,007,908	1,132,722,629	48,900	36,365	85,265
9/30/2014	597,463,161	596,838,117	1,194,301,278	52,186	37,846	90,032
10/31/2014	664,452,259	663,819,700	1,328,271,959	54,266	39,163	93,429
11/30/2014	694,010,382	693,349,141	1,387,359,523	54,239	41,570	95,809
12/31/2014	861,662,809	860,947,825	1,722,610,634	52,704	44,103	96,807
1/31/2015	692,861,738	696,049,479	1,388,911,217	61,213	49,447	110,660
2/28/2015	720,551,636	724,266,548	1,444,818,184	61,727	52,621	114,348
3/31/2015	757,709,920	762,249,465	1,519,959,385	62,341	56,319	118,660
4/30/2015	775,381,523	780,806,384	1,556,187,907	62,847	59,435	122,282
5/31/2015	815,857,567	821,898,089	1,637,755,656	63,619	62,288	125,907
6/30/2015	837,353,922	843,806,822	1,681,160,744	63,938	65,598	129,536
7/31/2015	889,345,626	896,389,330	1,785,734,956	63,933	68,483	132,416
8/31/2015	847,508,127	854,889,351	1,702,397,478	63,467	70,265	133,732
9/30/2015	893,113,831	900,444,588	1,793,558,419	65,313	72,418	137,731
10/31/2015	893,343,354	900,730,920	1,794,074,274	64,923	73,969	138,892
11/30/2015	903,328,288	911,329,618	1,814,657,906	65,298	74,776	140,074
12/31/2015	1,095,696,466	1,103,427,452	2,199,123,918	64,795	75,478	140,273
1/31/2016	877,172,317	886,070,215	1,763,242,532	62,034	75,666	137,700
2/29/2016	926,561,205	936,495,987	1,863,057,192	62,706	77,457	140,163
3/31/2016	966,318,055	978,388,128	1,944,706,183	63,453	80,335	143,788
4/30/2016	978,388,128	989,546,705	1,967,934,833	64,674	82,965	147,639
5/31/2016	1,005,723,405	1,017,571,804	2,023,295,209	65,557	85,267	150,824
6/30/2016	1,022,804,976	1,034,912,945	2,057,717,921	66,287	87,598	153,885
7/31/2016	1,071,539,223	1,083,777,175	2,155,316,398	66,364	89,367	155,731
8/31/2016	1,038,723,249	1,050,671,855	2,089,395,104	65,810	91,324	157,134
9/30/2016	1,082,617,675	1,094,219,187	2,176,836,862	67,507	93,504	161,011
10/31/2016	1,079,061,880	1,090,296,758	2,169,358,638	66,884	94,338	161,222
11/30/2016	1,100,584,443	1,112,972,115	2,213,556,558	66,686	95,586	162,272
12/31/2016	1,307,546,094	1,319,819,291	2,627,365,385	66,108	96,005	162,113
1/31/2017	1,082,435,939	1,095,632,960	2,178,068,899	65,615	94,740	160,355
2/28/2017	1,120,807,294	1,133,467,776	2,254,275,070	65,915	96,415	162,330
3/31/2017	1,183,279,087	1,196,702,755	2,379,981,842	66,366	99,856	166,222
4/30/2017	1,171,605,407	1,182,404,213	2,354,009,620	66,588	103,254	169,842
5/31/2017	1,205,789,064	1,204,666,630	2,410,455,694	66,667	106,416	173,083
6/30/2017	1,192,666,141	1,191,643,002	2,384,309,143	66,777	109,260	176,037
7/31/2017	1,022,800,423	1,021,939,959	2,044,740,382	65,967	111,407	177,374
1/01/2018	1,304,389,966	1,289,343,220	2,593,733,186	69,225	117,826	187,051
1/02/2018	1,228,585,024	1,216,235,889	2,444,820,913	69,516	122,362	191,878
1/03/2018	1,212,378,353	1,199,945,010	2,412,323,363	67,213	130,769	198,000*
1/04/2018	1,169,175,171	1,156,966,683	2,326,141,854	65,083	138,917	204,000*

*Մտավոր տվյալներ են՝ հաշվի առնելով նախկին միտումները

Հավելված 2. Կուտակային կենսաթոշակային հաշիվներ ունեցողների շարժ

N	Մասնակիցները	ԸՍՏ ՀԱՇՎԵՏՈՒ ՄԱԽՍԵՆԵՐԻ				
		01/12/2017	01/01/2018	01/02/2018	01/03/2018	0/04/2018
1.	Հաշվետու ամսվա վերջին օրվա դրությամբ կենսաթոշակային հաշիվ ունեցող անձանց թիվը (որոնց հաշվին առկա են կենսաթոշակային միջոցներ), այդ թվում՝	325,534	330,037	330,034	330,200	330,198
1.1.	պարտադիր մասնակիցներ, ովքեր ծնվել են 01.01.1974թ. և դրանից հետո	325,059	329,563	329,560	329,722	329,722
1.2.	կամավոր մասնակիցներ	475	474	474	478	476

Հավելված 3. Պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի զուտ ակտիվների արժեքը (NAV) և պարզալվճարների չափը առ 01.06.2018 թվականը

Կենսաթոշակային ակտիվների կատարյալ անվանումը	Կենսաթոշակային ֆոնդի անվանումը	Զուտ ակտիվների արժեքը (NAV)	Ֆոնդի եկամտաբերությունը ստեղծման պահից	Ֆոնդի եկամտաբերությունը 2018թ. (տարեկանացված)	Պարզալվճարների չափը
Սննդի Սկրա Սևեթ Սենեջմենթ Սրմննիա ՓԲԸ	Հավասարակշռված ֆոնդ	1.5 մլրդ դրամ	51.8 %	7.2 %	1.0 %
	Պահպանողական ֆոնդ	60.7 մլրդ դրամ	47.7 %	7.0 %	1.1 %
	Կայուն եկամտային ֆոնդ	826 մլն դրամ	43.0 %	7.2 %	1.3 %
Ցե Կվադրատ Սնպեգա Սևեթ Սենեջմենթ Սրմննիա ՍՊԸ	Հավասարակշռված ֆոնդ	639 մլն դրամ	45.1 %	6.5 %	1.0 %
	Պահպանողական ֆոնդ	59.4 մլրդ դրամ	44.7 %	6.8 %	1.1 %
	Կայուն եկամտային ֆոնդ	391 մլն դրամ	53.6 %	8.2 %	1.3 %
Ընդամենը		123.4 մլրդ դրամ	46.5 %	6.9 %	

Հավելված 4. Կենսաթոշակային ֆոնդերի ակտիվների կազմը և կառուցվածքը առ 01.06.2018 թվականը

N	Ակտիվների տեսակները	Գումարը	
		մլրդ. ՀՀ դրամ	%-ներով
1.	Ֆոնդերում կուտակված ընդհանուր գումարը, այդ թվում՝	134.6	100
2.	ՀՀ տնտեսության մեջ, որից՝	48.6	39.4
2.1.	Բանկային ավանդներ և հաշիվներ	37.3	30.3
2.2.	Կորպորատիվ, հիփոթեքային և միջազգային կազմակերպությունների պարտատուներ	11.3	9.1
3.	Սվանդներ և հաշվիներ ոչ ռեզիդենտ բանկերում	2.5	2
4.	ՀՀ պետական պարտատուներ	37.2	30.2
5.	Օտարերկրյա ներդրումային ֆոնդերի արժեթղթեր	35.1	28.4



Հավելված 5. Պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի հիմնական ցուցանիշները (ՀՀ դրամ)

	31.12.2014		31.12.2015		31.12.2016		31.08.2017	
	Ընդամենը	այդ թվում արտարժույթ	Ընդամենը	այդ թվում արտարժույթ	Ընդամենը	այդ թվում արտարժույթ	Ընդամենը	այդ թվում արտարժույթ
Զուտ ակտիվների արժեք (NAV)	12,119,197,010	1,684,956,127	31,499,548,226	10,415,958,208	63,227,308,278	21,417,519,919	89,460,862,733	30,160,101,688
Դրանական միջոցներ և ավանդներ	6,350,009,987	294,085,695	7,206,454,876	37,432,307	16,996,181,719	1,622,069,103	29,540,024,275	541,579,946
Պարտատոմսեր, այդ թվում	4,273,222,152	-	14,684,423,202	806,323,157	28,790,648,112	2,441,754,828	34,786,238,277	5,104,884,075
ՀՀ պետական պարտատոմսեր	4,096,092,857	-	13,414,042,052	357,213,024	24,670,395,476	385,338,549	26,540,499,824	400,672,022
այլ պարտատոմսեր	177,129,294	-	1,270,381,149	449,110,133	4,120,252,636	2,056,416,279	8,245,738,453	4,704,212,053
Բաժնային արժեթղթեր	1,390,993,087	1,390,993,087	9,570,141,321	9,570,141,321	17,353,695,989	17,353,695,989	24,513,637,668	24,513,637,668
Սլյ ակտիվներ	130,306,195	-	79,040,563	2,082,829	182,841,420	-	718,057,669	-
Ընդամենը ակտիվներ	12,144,531,420	1,685,078,782	31,540,059,962	10,415,979,614	63,323,367,239	21,417,519,919	89,557,957,889	30,160,101,688
Ընդամենը պարտավորություններ	25,334,410	-	40,511,735	21,406	96,058,961	-	97,095,155	-
Փայի հաշվարկային արժեք								
Ֆոնդերի իրական եկամտաբերությունը տարեկազից % (տարեկանացված)	4.46 %		5.30 %		13.80 %		12.90 %	
Ֆոնդերի եկամտաբերությունը ստեղծման պահից (վայի անվանական արժեքի փոփոխություն) %	4.46 %		10.00 %		25.18 %		35.88 %	

Կառավարման արդյունքում ձևավորված գրառ եկամտաբեր կազմում է շուրջ 15,390,597,164 մլրդ առ 31.08.2017 թ.



Վերլուծություն 1

Կարագի գնի բարձրացման պատճառները:
Մենաշնորհների դեմ պայքարի մեխանիզմները:



Վերլուծություն 2

Վառելիքային շուկայի առկա հիմնախնդիրները
և հնարավոր լուծման ուղիները ՀՀ-ում:



Վերլուծություն 3

Շյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային
ծրագրի առկա վիճակը և խնդիրները:



Վերլուծություն 4

Սանրաձախ առևտրի համակենտրոնացման
միտումները ՀՀ-ում:



ՀՐԱՅՐ ՄԱՐՈՒԿԻԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

Հրայր Մարուխյան Հիմնադրամը հիմնադրվել է Հայաստանի Հանրապետությունում 2009թ.-ին՝ Հայ Յեղափոխական Դաշնակցության Հայաստանի Գերագույն Սարմսի կողմից: Այն հանդիսանում է շահույթ չհետապնդող հիմնադրամ, որի նպատակն է հանրային, քաղաքական խնդիրների լուծման առաջխաղացումն ու զարգացումը, որոնք նպաստում են սոցիալական ժողովրդավարության հիմնական արժեքների տարածմանը՝ կրթական և ուսումնական ծրագրերի, ուսումնասիրությունների և տարածաշրջանային ու միջազգային համագործակցության միջոցով:

www.maroukhianfoundation.org/am/
www.facebook.com/HrayrMaroukhianfoundation/



ՀՅԴ ԲՅՈՒՐՈՅԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՇԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ

ՀՅԴ Բյուրոյի տնտեսական հետազոտությունների գրասենյակը կազմավորվել է 2017 թվականի ամռան ընթացքում: Գրասենյակի գործունեության հիմնական նպատակն է Հայ Յեղափոխական Դաշնակցության քաղաքական և սոցիալ-տնտեսական նարտավարության մշակումը և իրագործման մշտադիտարկումը (մոնիտորինգը):